



ՀԱՅԵՐԻՐ ԱՄՍԱԹԵՐԻ ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ
"PAPÈRE"
 REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
 ORGANE DES ÉGLISES ÉVANGÉLIQUES ARMÉNIENNES DE FRANCE

Téléphone C. 03-97

Rédaction et Administration :
 7, Rue Papère — MARSEILLE

ԺԿ. ՏԱՐԻ - ՓԵՏՐՈՒԱՐ 1938 14^{me} Année - Février 1938

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

Վեր. Ա. Զ. Եղոյեան շնչեց ի Տէր

Յ. Ն. Ղ.

Հոգ. կեանք

Թագաւորին զինուորը պատուական սեպել

Թրգմ. Ն. Մ.

Վեր. Ա. Զ. ԵՂՈՅԵԱՆ

Համառօտ կենտագրական գիծեր

Յուդարկաւորութիւնը

Վերջին օրերը

XXX

Յ. Խարրութեան

Քոյր Ա. Գազանճեանէ

Զանազան վկայութիւններ

Ամերիկայէն

Արձագանգ Գերմանիայէն

Զայն մը Սուրիայէն

Օրհնեալ յուշեր

Իմ տպաւորութիւններս

Վեր. Պ. Ս. Ակիւլեան

Վեր. Ե. Էմման

Մինաս Պօղօքեան

Վեր. Ա. Օ. Փափազեան

Բրօթ. Գ. Գ. Խալիկեան

Երգ

Օր մ'ալ պիտ' իմ լռեն երգեր

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնականներէն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Տշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կըզգան Աստուծոյ խօսքին անխաբիւս
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բոլորի Տշմարիտ «Բան»ին
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանաւանութիւն մը,
հասար մէկ է անոնց հետ, որոնք չՔրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

«ԲԱՆԲԵՐ» հոգեւոր ամսաթերթը կը հրատարակուի Մարտէլի մէջ 16 էջերով (կողքէն զատ)

անոր խմբագրական մարմնին անդամներն են

Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Վեր. Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ, Վեր. Ա. Օ. ՓԱՓԱԶԱՆ, Վեր. Զ. Բ. ՊՈՒՏԱԲԵԱՆ
ԲՐՈՓ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատ. Ս. ՊԱԳԻԱԼԵԱՆ, Պատ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ, Պատ. Ի. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ



ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:
Յօդուածաշարքեր միջեւ որ ամբողջութիւնով խմբագրութեան
ծեռքը չհասնին, նկատի չեն առնուիր:

Յօդուածներ կարելի եղածին չափ ընթերցելի եւ մեկնումով գրուած
ծուղմին մէկ կողմին վրայ միայն եւ ԿԱՐՃ ըլլալու են: Խմբա-
գրութիւնը յօդուածները յապաւելու եւ սրբագրելու եւ օգտակար
դարձնելու համար փոփոխութիւններ ընելու ինչպէս նաեւ զանոնք
չհրատարակելու իրաւունքը իրեն կը վերապահէ, քանզի իրօք
կուգան լաւ յօդուածներ որոնք երբեմն կրկնութիւն են
առաջուրնէ հրատարակուած խորհուրդներու: Այսպիսիներ զանց
կ'ընենք, ուրիշ յօդուածներու տեղ ապրի համար:



ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կանխիկ
բաժանորդագրութիւնը կ'սկսի ամէն տարի ցունուարին
եւ կը վերջանայ Կեկտեմբերին:

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

Ֆրանսա. 25 Փրանք, Սուրիա 20 Փրանք
Արտասահման Տոլար 1. 25

Դ Ի Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր
ՀԵՏԵԻԵԱԼ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ


Ամերիկայէն travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ ղրկուիլ:
Ուրիշ երկիրներէ \$1.25ի համարժէք ամէն տեսակ դրամ:
Յօդուածներ ղրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ
իսկ թղթակցութիւններ եւ դրամական առաքումներ
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, երկուքն ալ
հետեւեալ հասցէով:—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
7, Rue Papère
MARSEILLE (France)

Մանտայով դրամական առաքումի առթիւ Հաճեցէք մանտային վրայ գրել
H. N. Ghazarossian, 7, rue Papère - Marseille (France) C. C. No. 182.53-Marseille

Արթնցի՛ր դուն
որ կը քնանաս, ես
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛յ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մամեկու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ծեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Դ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի ջուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԴ. ՏԱՐԻ

ՓԵՏՐՈՒԱՐ 1938

ԹԻԻ 2

ՎԵՐ. Ա. Զ. ԵՂՈՅԵԱՆ ՆՆՁՆՑ Ի ՏԵՐ

Հայր իմ, հայր իմ, Խորայէլի կառքը ու անոր ձիաւորները: Դ. Թագ. Բ 12

«Բանբեր»ի 1937 տարուան Դեկտեմբերի թիւը պատրաստուելու վրայ էր, երբ այս լուրը առինք: Այն ատենէն ի վեր տունէ տուն, եկեղեցիէ եկեղեցի, հաւատացեալէ հաւատացեալ ձայն տուաւ այս խոր ազդող լուրը:

Տրամեցանք և ուրախացանք այնպիսի զարմանալի զգացումով մը համակուած, զոր մենք ալ չէինք կրնար բացատրել:

Հայ ազգի հաւատացեալներու մեծամասնութիւնը, որ կը ճանչնան զինք, կարծես այս օրերը աւելի ջանք մը կ'ընեն զինքը աւելի սիրելի ընելու իրենց, հաւաքելով իրենց յուշերը, միտք բերելով անկէ լսած մէկ քարոզը, քարոզները, անոնցմէ առած իրենց ազդեցութիւնը, այո՛ նոյնիսկ Վեր. Եղոյեանի մէկ հոգեւոր զաւակը, զաւակին եղբայրը, անոր հոգեւոր թոռը ըլլալու բաժինովն իսկ ուրախ գոհունակութեամբ՝ անոր համար աւելի եւս զգածուելու:

Այս զգացումները բոլորովին բնական են և հասկնալի:

Քան զի Վեր. Եղոյեան վստահելի հոգեւոր մըն էր: Սմէն մարդ կը ճանչնար զինքը որպէս հոգեւոր մը և պաշտպանողական Աստուածաբան վարդապետ մը: Իրեն բարեկամներն ալ և եթէ ունէր հակառակորդներ ալ նոյն գաղափարն ունէին իր մասին թէ նա Քրիստոսի համար սրբուած մըն էր և Անոր համար իր կեանքը մատնած մէկն էր:

Կը խօսէր ինչ որ Ս. Գրքէն էր և Ս. Գրական և ի՛նչ որ Ս. Գրքէն էր, զայն կը խօսէր: Վստա-

հելի էր, քան զի իր խօսածին կատարելապէս կը հաւատար և հաւատացածին ուղղութեամբ կը շարժէր իր կեանքով և կեանքին հետ առնչութիւն ունեցող բոլոր պայմաններով: Իր գործերը, նամակները, քարոզները, ուտելը, խմելը, ճամբորդելը այդ ուղղութեան համաձայն էր: Այս է պատճառը որ Եղոյեանի խօսքը որուն ետեւը թաղուած էր, խանդակաթ սէր, անկեղծութիւն և զութ, որպէս հեղինակութիւն կ'ընդունուէր:

Սակայն Եղոյեան երկինքէն իջած մէկը չէր: «Բանբեր» բացառաբար ներկայ թիւին մեծ մասը այդ պատուական անձին կենսագրութեան և գնահատականներուն կը յատկացնէ. նախ զայն աւելի մօտէն ճանչցնելու և սիրելի ընելու իրեն անծանօթներուն, երկրորդ բոլոր մարդոց ըսելու թէ կայ յաւիտեանական կեանք մը և մենք այս աշխարհի վրայ կրնանք գիտնալ թէ երկնային թագաւորութեան զաւակներն ենք թէ ո՛չ, երրորդ կրնանք այդ կեանքի յոյսովը ուրախանալ մինչեւ մեր երկրային օրերուն վերջին վայրկեանը և անկէ անցնիլ փառքին: Չորրորդ կ'ողենք բոլոր հաւատացեալներուն բացատրել թէ Եղոյեան Եղոյեան չծնաւ, հապա Եղոյեան Ս. Հոգիէն պարտուելէ յետոյ Անոր լոյսին տակ երկար հոգեւոր մաքառումներէ, ներքին պայքարներէ, ճնշումներէ, նուաճումներէ և յաղթութիւններէ անցած է և թէ Եղոյեան չէ միակ վկան այս յաղթական կեանքին, հապա մէկը այն բազմութեան ամպին որ մեր բոլորտիքը պատած է: Հինգերորդ, որպէս զի հաւատացեալ-

ները քաջալերուին, զօրանան, խթանուին, Երբ. ԺԲ 12ի համաձայն, հոգեւոր կեանքը ապրելու և չտկարանալու պարտութեանց մէջ, հապա Յիսուսի նայելով իրենց առջեւը դրուած ասպարէզի ընթացքը քալին Ս. Հոգիով և Անոր ղեկավարութեամբ մինչեւ յաղթութիւն:

Ու այս բոլոր տողերը ըլլան Աստուծոյ փառքին և եկեղեցիին շինութեան համար:

«Քաջ եղէք, ո՛վ եղբայրներս,
Մօտ է... ստոյգ յաղթութիւն»:

Այս տողերը ուրեմն գրուած են առ ի քաջալերութիւն բոլոր ծնողաց, պայքարող հաւատացեալներուն, որոնց մէջ նաեւ կ'իր. Դպրոցի ուսուցիչներու, աւետարանիչներու, քարոզիչներու, հովիւներու և վարդապետներու:

Վերը ըսինք թէ Վեր. Եղոյեան այդպէս աշխարհ չեկաւ: Անիկա իր առաջին հոգեւոր և Աստուածաբանական դաստիարակութիւնը ընդունեց իր բարի և հաւատացեալ հօրմէն, Զաքար եղբորմէն, Խոյլուի մէջ իրենց հօրենական թոնիրին դուրսը: Հոն է որ այս Քրիստոսի ախոյեանին հոգեւոր կեանքի հիմը դրուած է: Յաճախ լսած եմ իրմէ՛ այդ ընտանեկան յաղթութիւններու մասին: Ուրեմն ո՛վ ծնող, «կրթէ մանուկը իր ճամբան սկսած ատենը, որպէս զի իր ծերութեան ատենն ալ անկէ չխոտոյի» Առակ. ԻԲ 6:

Վեր. Եղոյեան մանկութենէն ի վեր ուսումնատենչ մէկն էր: Իրեն ամենամեծ հաճոյքն էր կ'արդաւ, լսել, սորվիլ: Այս տենչը մանկութենէն սկսեալ մինչեւ իր ծերութիւնը շարունակեց:

Իր կարգացածները կը քննէր, թէ այս այսպէ՛ս է և երբ ճամարտութիւնը կը գտնէր, կ'ընդունէր եւ կը ֆնազանդէր անոր, ուր ալ գտած ըլլար: Մեծ մարդոց յատկանիշներէն են այս յատկանիշները: Ու Եղոյեան տքնաշան քննեց և գտաւ Ֆլամարտուծիւնը Աստուածաշունչին մէջ: Այս ճամարտութեան հասնելու համար սակայն մեծ պայքարներէ անցած է նա իր գօլէճական կեանքին և Աստուածաբանական ուսումնասիրութեանց և անկէ յետոյ քարոզչական պաշտօնի ընթացքին: Պայքարը դիւրին բան չէ և ամէն մարդու գործ չէ. նա իր պրպտումները բնաւ կէս չէր թողուր, հապա կը շարունակէր մինչեւ որ հասնէր: Օրինակի համար, իննսունական տարիներուն արդէն լուսաւորուած էր հաւատոյ մկրտութեան հարցով, այս պատճառաւ իր պաշտօնէութեան բոլոր տարիներուն ի թուրքիա մէկ մանուկ չմկրտեց: Այդ տարիներուն, Աւետարեբի

մէջ իր առած լոյսը ներկայացուց Հայ Աւետ. եկեղեցիին: Նոյնպէս հետզհետէ մարդարէական և Քրիստոսի երկրորդ զալստեան ճշմարտութեանց հասաւ:

Բաւական կարգացեր եմ իր անտիպ գրութիւններէն, որոնք ցոյց կուտան թէ Վեր. Եղոյեան ճշմարտութեան հասնելու համար զանազան հանդոյցներէ անցած և յաղթական դուրս ելած է: Իր վկայութիւններն ալ միշտ այս եղած են: Քիչ մը տեղեակ եմ E. G. Whiteի, Christian Scienceի հիմնադիրներուն, Ռուսէլականներուն Fosdickի հետ ունեցած իր հակապայքար թրդթակցութիւններուն, ինչպէս նաեւ զաղափարի փոխանակութեանց Dr. Torreyի, Penn-Lewisի, Evan Robertsի, Campbell-Morganի, Scoffieldի, Morrowի, Blackstoneի և այլ բաժնուած ու դեռ ապրող հոգեւոր տիտաններուն հետ, որոնցմով նա օրէ օր աւելի կը խորանար Ս. Գրական հաւատքին մէջ: Իր հաւատքը Աստուածաշունչի տառական ներշնչման՝ այդքան ալ դիւրին եղած չէ, քան զի Եղոյեան դիւրահաւան մէկը չէր, սակայն ի՛նչ որ ընդունած էր և որու որ հաւատացած էր, զայն զանձի մը սլէս կը պահէր: Ահա իր ոյժը:

Սակայն ասով միակողմանի անձ մը պիտի ըլլար Եղոյեան, եթէ նկատի չառնենք նաեւ խնդրոյն միւս կողմը: Ան ի՛նչ որ որպէս ճշմարտութիւն ճանչցած էր, ոչ միայն անոր համար իր կեանքը կուտար, այլ նաեւ կը ցանչցնէր ուրիշներուն գրելով և քարոզելով. և ճշմարտութիւնը հեղինակութեամբ կը քարոզէր: Պօղոսի պէս իր փափաքն ալ էր որ թէ՛ քչով և թէ՛ շատով, ամենն ալ իրեն պէս ըլլային:

Ու եթէ այսօր «Բանբեր»ի միջոցաւ ուզէր իր փափաքն յայտնել, պիտի ըսէր նորէն. «Ինձի նմանող եղէք»:

Ի՛նչ քաջալերութիւն հաւատացելոց համար: Այժմ մեզի կ'իյնայ այնպէս վազել որ հասնինք առանց թուլնալու և հեղզանալու: Սրբութիւնը մեզի համար է, յաղթութիւնը, երկնային կեանքը այս աշխարհի վրայ, Քրիստոս, Հայրը, Անոր միջոցաւ երկնային փառքը մեզի համար են վասն զի Ս. Հոգիին զաղտնի գօրութիւնը մեր մէջ կը գործէ և խոստացած է աւելի գործել:

Օ՛ն, ուրեմն Տէրոջը զաւակներ, քաջալերուեցէ՛ք. անապատային քարոտ ճամբաներէ կ'անցնինք, խիստ տաքը զմեզ կը նեղէ նուաղեցնելու աստիճան, բայց քիչ մնաց: Քիչ մը վերջը ֆանգիստը կայ:

Ու մեզի, Եղոյեանին յաջորդներուն, որոնք

դեռ Տէրոջը դաշտին մէջն ենք, արտօնուած է ազադակել «Հայր իմ, հայր իմ, Իսրայէլի կառքը ու անոր ձիւները»:

Տէրը անոր հոգին շատ մը Եղիսէներու վրայ առատապէս թափէ:

Անոր հոգեւոր որդիներէն մին

Յ. Ն. Ղ.



ԹԱԳԱՌՈՐԻՆ ԶԻՆՒՈՐԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՍԵՊԵԼ

Ուրեմն ընդունեցէք զանի՝
կա Տէրոջմով ամէն ուրա-
խութեամբ: ՓԻԼ. 2. 29. 30

Այսպէս վարուելու ենք Եպափրոդիտոսի հետ՝ երբ ան մեր դէմն ելլէ: Նախ և առաջ մեր անոր ցոյց տուած ընդունելութիւնը նուիրական դառնալու է Տէրոջը ներկայութեան գիտակցութեամբ: «Տէրոջմով» ընդունելու ենք զայն: Պօղոս Առաքեալը չուզեր որ Տէրոջը ծառան այնպէս ծափահարենք, որպէս թէ անոր ունեցած յաջողութիւնը լոկ մարդկային ու առանց իր Տէրոջը հետ ունեցած ներքին յարաբերութեանն ըլլար: Մեզի խիստ բնական է ծառան ծափահարել ու անոր Տէրը մոռնալ: Աւելի հակամէտ ենք շողոքորթական բառեր գործածելու, քան ակնածելի գովասանք մատուցանելու: Մեր ժամանակին վտանգներէն մէկն է այս, որ աւելի զօրաւոր արտայայտութիւն գտած է քրիստոնէական մամուլին կողմէն: Ներկայ Եպափրոդիտոսը հիւսքանչ ու նախանձաւոր ամբօխի մը առջեւ կը կայնեցուի: Կը նկարարագրուին անոր հագուստները, անոր անձնական սովորութիւններն ու արտակարգ յատկութիւնները, անոր անձնական ցաւերն ու զրօսանքի տեսակները մինչեւ որ չափազանց ոչնչարանութեանց մէջ, անոր Տէրը կ'անտեսուի: Որչափ տարբեր է այս ընդունելութիւնը Պօղոսի յանձնարարած ընդունելութենէն: Եպափրոդիտոս «Տէրոջմով» ընդունուելու է: Տէրոջը մեծափառ ներկայութեան լոյսը այնպէս լուսաւորելու է ամբողջ տեսարանը, որ անոր անրիժ ճառագայթներուն տակ որեւէ ոչինչ անձնական կէտ նսեմանայ: Երբ այս կարգի ընդունելութեանց մէջ Քրիստոսի ներկայութիւնը կը զգանք, մեր ուշադրութիւնը կը դառնայ Տէրոջը ծառային՝ իր Տէրոջը հետ ունեցած նմանութեան

վրայ, ու մենք մէկէն միւսին՝ այսինքն Արեգակէն, անոր ցոլացման կը նայինք և մեր հոգիները բնագոյրէն մեծարանք կ'զգան ու մեր գովասանութիւնները կը մատուցուին ակնածութեամբ և ծունկի վրայ:

Այս կարգի ընդունելութիւն մը անխուսափելիօրէն տեղի կուտայ ուրախութեան աղբիւրներու: Երբոր շողոքորթութեամբ մօտենանք մարդոց՝ ինքնագոհացման ջուրերէն միայն կը խմենք, սակայն երբ զանոնք «Տէրոջմով» ընդունինք, ամէն ուրախութեամբ, «Փրկութեան աղբիւրներուն» ջուրը կը քաշենք: Երբ Տէրոջմով ընդունինք, Տէրոջմով ալ ուրախ կ'ըլլանք:

«Ու այսպիսիները պատուականներու կարգը բռնեցէք»: Պատուականներու ինկած յարգանքը անոնցմէ ետ պահելով ինքզինքնի՝ կ'աղքատացնենք: Կեանքի մէջ մեծ օրէնք մը կայ, որով մարդ յարգելով կը յարգուի: Ճշմարիտ ազնուականութիւնը պատուելով, մենք ալ ազնուականներու կարգը կը դասուինք: Այն վայրկեանին որ մեր ճշմարիտ յարգանքը կը բերենք հերոսի մը, անոր հերոսութենէն նշոյլներ կը տեսնենք մեր հոգիներուն մէջ: Մեր ընդունելու կերպէն կախում ունի մեր ընդունակութեան աստիճանը: Ինչ բանի որ հաւանութիւն ցոյց տանք, զայն կ'իւրացնենք ու Եպափրոդիտոսը պատուելով, կ'մկսինք անոր նմանիլ: «Ան որ արդար մը կ'ընդունի արդարի անունով, արդարի վարձք պիտի առնէ»: Ուստի իմ մատուցած յարգանքս ինձմէ դուրս ու անշատ և իմ «ես»-իս հետ կենսական յարաբերութիւն չունեցող բան մը չէ, այլ բարձրագոյն ճամբայ մը, որուն վրայէն իմ եղբօրս փառքը կամ ամօթը անխուսափելիօրէն իմ հոգւոյս կը փոխանանուի: Երբ բարի մարդ մը կը պատուենք, մեր անոր ցոյց տուած պատիւը ճոխութիւն կուտայ մեր կեանքին:

«Քանզի Քրիստոսի գործին համար մինչեւ մահուան մօտեցաւ, իր կեանքը վտանգի մէջ ձգելով, որպէսզի ձեր ինծի ծառայելու պակասութիւնը ինք լեցնէ»: Ահա թէ ինչու զայն պատուելու եմ: Քանզի անիկա ամէն բանէ աւելի պատուեց Տէրը: «Մինչեւ մահուան մօտեցաւ», իր կեանքը վտանգեց Քրիստոսի գործին համար: Մեզմէ շատերս խիստ տկար ենք մեր հոգեւոր ձեռնարկութեանց մէջ, կարծես շատ քիչ արիւն կայ մեր երակներուն մէջ, կամ թէ բնաւ չկայ: Քրիստոսի գործը յանձն կ'առնենք, սակայն մեր կեանքերը չենք դնել անոր մէջ, ուրեմն անկենդան կը մնայ: Երբեմն ցնցում մը կուտանք, որ քիչ մը կեանքի կը նմանի, բայց արուեստական

է ու երբեք կեանք չհաղորդեր ուրիշներու: Ինչ չափով որ ինքզինքն իս մեր գործին նուիրենք, ճիշդ նոյն չափով զօրութիւն կ'ստանանք: Առանց արիւնի կեանք չկայ, ոչ ալ առանց կեանքի՝ զօրութիւն: Երբ անձերն իս վտանգելու աստիճան յետապնդենք մեր գործը՝ գերագոյն զօրութեան մասնակից կ'ըլլանք, քանզի այն ատեն կը սկսինք գործածել ամենուս համար Իր արիւնը թափող Տէրոջը հօգի ոյժը:

Եպափրոզիտոս երբեք ետ չդարձաւ, երբ իր Գողգոթան սկսաւ երեւնալ, այլ քաջաբար յառաջ քալից ու երգով բարձրացաւ այն աղէտալի բլուրը: Բոլոր Աստուծոյ մեծ ծառաները անցեալի մէջ, ամէն ինչ ի սպաս դրած են իրենց ձեռնարկութեանց ու սուրբ խաչակրութեամբ զիմադրած աշխարհի, մարմինի ու սատանային: Երբեք վախցած չեն վճարուելիք զինէն, ոչ ալ ընկրկած արեան պահանջի առջեւ: Ասպարէզ կարգացած են բոլոր իրենց պահեստի ոյժերը և իրենց ամբողջ կորովը ուրախութեամբ նուիրած իրենց Տէրոջը թագաւորութեան նպատակին:

Այս կարգի հիանալի աշխատութիւն և կիններու նկատմամբ ճշմարտապէս ըսուած է թէ «Մարտիրոսներու արիւնը եկեղեցիին սերմը կը կազմէ»: «Այո, զոհի արեան իւրաքանչիւր կաթիլը սերմ մըն է, որուն մէջ անսահման կարողութիւն կայ ու յաւիտեանս յաւիտենից պտուղ պիտի բերէ մեր Տէրոջը փառաւորեալ եկեղեցիին մէջ: Կաթիլ մ'իսկ պիտի չկորսուի ու պարապը պիտի չեւլէ»: Ան որ իր կեանքը կը կորսնցնէ, պիտի զտնէ զանիկա»:

Եպափրոզիտոս ոչ մէկ ժամանակ այնքան մօտ զտնուեցաւ իր Տէրոջը, որչափ այն պարագային որ Տէրոջը գործին համար «մահուան մօտ» եկաւ: Տէրոջը կը մօտենանք Զոհի սեղանին աստիճաններէն վեր ելլելով: Ուրեմն երբ Եպափրոզիտոս չարչարուիլ սկսաւ, սկսաւ նաեւ «Իր Տէրոջը ուրախութիւնը մտնել»: «Երբ զոհը սկսաւ, սկսաւ նաեւ Տէրոջը երգը»: Այն վայրկեանին որ Անոր չարչարանաց մասնակից կ'ըլլանք, անպատճառ բաժանորդ կ'ըլլանք նաեւ Իր փառքին:

Թարգ. Ն. Մ.

ՎԵՐ. Ա. Զ. ԵՂՈՅԵԱՆ +

(1867 յետ. 15 — 1937 յուլ. 16)

ՀԱՄԱՌՈՑ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

Վեր. Ասատուր Զաքարի Եղոյեան ծնաւ Խարբերդի Խոյլու գիւղը: Հայրը, Զաքար եղբայր, Խոյլուի Հայ. Աւետ. եկեղեցիի հիմնադիրներէն մին, բարեպաշտ եկեղեցւոյ անդամ մըն էր, որ Քրիստոսի լոյսը ցոլացուցած է իր անդրանիկ զաւակին և ուրիշ շատերու վրայ:


Ասատուր իր նախնական դպրոցական ուսումը գիւղին մէջ առնելէ յետոյ 1881ին Եփրատ գօլէճ մտաւ, ուրկէ ընթացաւ արտ եղաւ 1889ին:

1889ին Արաբկիր ուսուցիչ եղաւ:

1892ին Աստուածաբանական ճեմարան մտաւ ի Խարբերդ և 1893ին ի Մարաշ աւելի կատարելագործելու այս ուսումը:

1895ին քարոզիչ ի Բալու և Խարբերդ գօլէճ:

1896ին պաշտօնի հրաւիրուեցաւ Խոյլու իր բնիկ գիւղը, ուր նաեւ ձեռնադրուեցաւ:



Վեր. ԵՂՈՅԵԱՆ
պաշտօնէութեան սկիզբը

1904—1905 պաշտօնավարեց Ուրֆա:

1905ին կը գտնենք զինքը Խարբերդի մէջ քանի մը ամսուան համար, յետոյ,

1906—1909 Հովիւ Մեղրէի Աւետ. եկեղեցիին:

1909—1912 կրկին Ուրֆայի Աւետ. եկեղեցիին:

1912ին Գերման միսիոնարութեան Hilfsbundի հետ համաձայնելով մէկ տարի Գերմանիա

պտոյտ մը ընելէ յետոյ 1913ին բացաւ Թաղէսուհան Ս. Գրոց դպրոցը Մեղրէի մէջ սոյն միսիոնարութեան հովանաւորութեան տակ:

Տեղահանութեան և պատերազմի բոլոր ընթացքին մինչեւ 1922 մնաց Մեղրէ և գործեց որբանոցներու ու եկեղեցիներու մէջ:

1922ին Այնթապի վրայէն իր ընտանիքով միասին անցաւ Հալէպ:

1923ին Ամերիկայի Միացեալ Նահանգները, Քալիֆորնիա (Փէսէտինա):

1923ին միսիոնարական ճամբորդութիւն ղէպի արեւելեան նահանգներ և Քուպա և վերադարձաւ Փէսէտինա:

1928ին կրկնեց նոր ճամբորդութիւնը:

1934—35ին Ամերիկայի արեւելեան նահանգները երրորդ անգամ աւետարանելէ յետոյ անցաւ Սուրիա, Պաղեստին, Եգիպտոս, Յունաստան, Պուլկարիա, Գերմանիա, Զուիցերիա և Յրանսա, ուրկէ վերադարձաւ նորէն տուն:

1937ի աշնան կրկին անցաւ Շիքակո, Տիթրոյթ և Քանատա, ուր հիւանդանալով վերադարձաւ Տիթրոյթ, ուր իր մահկանացուն կնքեց Նոյ. 16ին երեկոյեան ժամը 9.30ին:



ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Աստուծոյ հաւատարիմ պաշտօնեան Վեր. Ասատուր Զ. Եղոյեանը ի Տէր յանգեաւ ժամը 9.30 կ. ե. 16 Նոյ. 1937, ի Տիթրոյթ (Միշիկըն) 70 տարիքին մէջ:

1937 տարւոյն Սեպ. ամսուն դարձեալ իր մէջ պատասխանատուութիւնն զգաց աւետարանչական շրջան մըն ալ ընելու, քանի որ շատոնց իրեն թախանձագին դիմումներ եղած էին այդ մասին. ուստի սոյն ամսուան մէջ ճամբայ ելաւ Բէսէտինայէն ղէպի Շիքակո ու Տիթրոյթ անկէ անցնելով Գանատա, ուր 3 տարի առաջուան հիւանդութիւնը կրկին հասաւ: 2 շաբաթի չափ մահու ու կենաց մէջ պայքարելով վերջապէս Տէրոջմով նորէն ոտքի կ'ելլէ. անկէ կը վերադառնայ Տիթրոյթ իր զաւկին մօտ, ուր դարձեալ հին հիւանդութիւնը կը յարձակի իր վրայ, հակառակ ամէն խնամքի այս անգամ Տէրը կը տանի զինք այս աշխարհէն, բաւական սեպելով և խնայելով իր վտիտ ու տկար մարմինին, և իր յոգնութիւններէն ազատելով փայլելու երկնից մէջ:

Նոյ. 22 Երկուշաբթի առտուն իր մարմինը հասաւ ի Յրէզնօ, ուր ամփոփուեցաւ նոր գերեզմանատան մէջ:

Յուդարկաւորութեան նախօրեակին, զինք սիրող ու յարգողներու խումբեր, արեւելեան և արեւմտեան Լօս Անճէլօսի երկու եղբայրութիւններէն և Բէսէտինայի եղբայրութիւնէն (ուր զործած էր հանգուցեալը), օթօմօպիներով փութացած էին ի Յրէզնօ միանալով Յրէզնոյի և շրջա-

կայքի քաղաքներու համակիրներու բազմութեան:

Յուդարկաւորութիւնը կատարուեցաւ Յրէզնոյի «Հայ պանդխտաց ժողովական» եկեղեցիին մէջ, ամենէն ընդարձակը ըլլալուն պատճառաւ, որուն հովիւն է Վեր. Մ. Կ. Փափագեան:

Երկուշաբթի օրը կէսօրէ վերջը ժամը 1ին սկսաւ տխուր արարողութիւնը: Վեր. Մ. Կ. Փափագեան ի գործ կը դնէր՝ հանգուցելոյն պարագաներուն փափաքին համաձայն, կարգադիր յանձնախումբին կազմած յայտագիրը, որ կատարուեցաւ շատ ազդեցիկ կերպով և հետեւեալ կարգով:

Ճիշդ ժամը մէկին հանգուցելոյն մարմինը եկեղեցիէն ներս ուսամբարձ բերուելով զետեղուեցաւ ամպիոնին առջեւ, վեց եղբայրներու կողմէ, որոնց երեքը Բէսէտինայէն և երեքը Յրէզնոյէն էին:

Վեր. Մ. Կ. Փափագեանի կողմէ աղօթք ու Սր. Գրոց ընթերցումէն վերջը Վեր. Թովմաս Մկրտիչեան (հանգուցելոյն քենեկալը) կարդաց Վեր. Ա. Զ. Եղոյեանի կենսագրականը:

Յետոյ Վեր. Ամիրխանեան, հանգուցեալին վաղուց ծանօթը Խարբերդէն, ըսաւ թէ Վեր. Եղոյեան այսպիսի առիթներուն կը զգուշացնէր ժողովուրդը, որ մեռեալը չը փառաւորուի, այլ միայն Տէր Յիսուս Քրիստոսը բարձրացուի: Հետեւաբար, փոխանակ անոր բարեմասնութիւններուն մասին խօսելու, պիտի խօսի «Յիսուսի նայելու» մասին: Նիւթ առնելով Երր. 12. 1, 2 և յորդորեց ներկաները, որ այս տառապալից և մեղաւախ աշխարհի մէջ ուր ամէն մարդկային կազմակերպութիւն և հաստատութիւն ձախողանքի մէջ շուարած ճար մը կ'որոնեն, միակ ճարը և դարմանը Յիսուսն է: Անոր նայինք:

Ապա Տօքթօր Միքայէլ Յակոբեան, հանգուցեալին հինէն մտերիմը, նախ կ'սրգալով Սաղմ. 116. 15, Թուոց 23. 10, Եսա. 57. 1, Մաթ. 23. 24, Յայտ. 14. 13, 7. 13ը, դրուատեց անոր թուրքիոյ մէջ և Ամերիկայի մէջ անցուցած ամբասիր, քաջ, աղօթասէր և հոգիներու փրկութեան անհուն փափաքովը լի կեանքը, և ըսաւ թէ Վեր. Ա. Զ. Եղոյեան շատ տարիներ առաջ մեռած ըլլալու էր բժշկական հայեցակէտով: Բայց Տէրը զինք ապրեցուց հրաշալի կերպով մը և այս տկար անօթին մէջ փառաւորուեցաւ զինք զործածելով բազմաթիւ հոգիներու փրկութեան համար: Նա ինկաւ քաջ զինուորի մը պէս, պատնէշին վրայ: Բ. Տիմ. 4, 7, 8:

Բէսէտինայի եղբայրներէն՝ Յ. Խարբուրեան,

նիւթ առնելով Յայտ. 12. 11, 12 ը, Վեր. Ա. 2. Եղոյեանի կեանքէն 3 ուշադրաւ կէտեր բաղդատեց վերի համարներուն հետ, թէ հանգուցեալը 1. Յաղթական եղաւ իր կատարեալ հաւատքովը, որ ընդունած էր Սբ. Գրքը տառապէս Աստուծոյ շունչը. և իր բեղմնաւոր աւետարանչական կեանքն ալ հիմնուած էր Յիսուս Քրիստոսի արիւնով եղած փրկութեան վարդապետութեան վրայ: 2. Աստուծոյ խօսքովը յաղթեց, զայն ուսանելով և իբր հատու զէնք գործածելով: 3. Իր անձը չը սկսելով յաղթեց մինչեւ ի մահ: Անգոսնելով իր վտիտ ու մաշած մարմինն վիճակը, իր վերջին աւետարանչական արշաւը 2500 մղոն իր տունէն հեռու վայրեր և հող ինչալը վկայ է անոր: Յետոյ կարգաց Պատուելիին վերջին 2 նամակները, որոնցմէ մէկը իր Գանատայի հիւանդութեան մահիճէն զրած էր, որոնց երկուքին մէջ ալ կը յայտնէր իր երիտասարդական կոորմի ու ջերմեռանդութիւնը աւետարանը տալու համար. և յորդորը ծոյլ ծոյլ նստողներուն համար: Եւ կը գրէր սա հատուածը. «Ա՛խ, երիտասարդ ըլլալի և Փրկչին սէրը յայտնէի աւետարանին կարօտ տեղերը»:

Վեր. Կարապետեան, «Իմ անձն պատուական չեմ սեպեր» (Գործ. 20 էն) համարով՝ վկայեց հանգուցեալին անցեալ կեանքէն և ըսաւ՝ Պատ. Եղոյեան Աստուածաբանական ճեմարանը աւարտելէն մի քանի տարի ետքը, յանկարծ փոփոխութիւն մ'ունեցաւ, պատճառը այն էր, որ անիկա (Սուրբ Գրքը մատնանշելով) այս գիրքը ընդունեց անվերապահօրէն Աստուածաշունչ մէկ կողքէն միւսը, և անկէ վերջը սկսաւ այս զէնքը գործածելու ըստ արժանւոյն և քարոզելու փրկութիւն Յիսուս Քրիստոսի արիւնով, որուն յաջորդեց շատ բեղմնաւոր գործունէութիւն մը:

Քառեակ մը երգուեցաւ «Դէմ առ զէմ», որ Վեր. Եղոյեանի սիրած մէկ երգն էր: Վեր. Մ. Կ. Փափագեանի աղօթքով վերջացաւ եկեղեցիի արարողութիւնը:

Յարգելու համար հանգուցեալին յիշատակը, փոխան ծաղկեպսակի նուէրներ ստացուեցան դուռը, Տէրոջը գործին յատկացուելու համար:

Յետոյ մարմինը փոխադրուեցաւ Ֆրէզնօյի գերեզմանատունը: Ինքնաշարժերու (անձնական) մեծ թափօր մը հետեւեցաւ մեռելակառքին, մինչեւ գերեզմանատուն, ուր Վեր. Մոմճեան (Լոս Անճէլոսի եղբայրութեան հովիւր) Յայտ 7, 9 ին «Ճերմակներ հազած և ձեռքերնին արմաւենիներ բռնած մեծ բազմութիւն»ը նիւթ առնելով ըսաւ թէ՝ «Վեր. Եղոյեանի հոգին ալ

այս բազմութեան հետ խառնուած է հիմայ» և վեր հանեց հանգուցեալին իր վրայ թողուցած ազդեցութիւնն ու օգտակարութիւնը իբր մեծ եղբայր և Սբ. Գրքոյ ուսուցիչ:

Ապա, Ֆրէզնօյի նորակազմ հայ հոգ. եղբայրութեան եկեղեցիի աւետարանիչը Վեր. Կ. Գալէմքեարեան խօսք առնելով՝ յիշեց թէ 28 տարի առաջ Այնթապի երեք եկեղեցիները միատեղ աւետարանչական ժողովներու հրաւերած էին Վեր. Ա. 2. Եղոյեանը, որ կը կառավարէր: Իր մէկ քարոզը «Եօթը զանգակներ» նիւթով պատճառ եղած էր իր արթննալուն հոգեւորապէս, հետեւաբար զինք միշտ կ'անուանէր «հայրիկ» իբր իր հոգեւոր հայրիկը:

Վերջին աղօթքը դարձեալ մատուց Վեր. Մ. Կ. Փափագեան:

Երբոր սգացեալներէն շատերը վերադարձան Տէր և Տիկին Գրիգոր Պօյաճեան բնակարանը, հոն կարգացուեցան ցաւակցական հեռագիրներ մօտաւոր ու հեռաւոր քաղաքներէն:

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

(Սոյն տողերը հաւաքուած են նամակներէն Աննակիւլ քոյր Գալանճեանի, որ Պատուելիին կ'ընկերանար իր վերջին աւետարանչական պտղոտին առթիւ):

«Գալիֆօրնիայէ բաժնուելէն յետոյ երկու ամիսի մօտ Շիգակոյի տարբեր վայրերուն մէջ գործած էր, մանաւանդ որ այս անգամ իր փափաքն էր Աւետարանը տանիլ իր մինչեւ հիմա չտեսած քաղաքները: Ինծի գրեց որ կը փափաքի Գանատա ալ երթալու: Երբ Տիթօյթ հասաւ, տեսայ որ շատ յոգնած ու տկար է այս անգամ: Յուրտը չհասած ուղեցինք նախ Գանատա երթալ: Մեր տան մէջ հինգ օր մնալէ յետոյ Գանատա գացինք, Պրանթֆօրտ քաղաքը, Աստուծոյ զաւակներու խումբէ մը մեծ ուրախութեամբ ընդունուեցանք, և սկսանք ժողովներու որոնք երեք օր տեւեցին: Որքա՛ն սիրով և եռանդով կը խօսէր ու անուպաշխարները կը հրաւիրէր փրկութեան:

Երբորդ իրիկունը երբ կը խօսէր «Քաւութիւն» նիւթին վրայ, բացատրեց տապանակը և անոր կափարիչը, յետոյ շարունակելով խօսեցաւ Տէր Յիսուս Քրիստոսի արեան վրայ, թէ ինչպէս բոլոր մեղքերը կը ծածկէ: Սեւ թղթապանակ մը առնելով վրան կարմիր լաթ մը ձգեց իբր օրինակ Յիսուսի արեան գործին և սկսաւ լալ ու

ըսել «Ահա՛ այս է աւետարանը. Տէր Յիսուսի արիւնը բոլորիդ մեղքերուն քաւութիւն է»: Երկու անգամ լացաւ ու ըսաւ թէ «իմ սիրելի ազգս ու ազգականներս, այս պատուական, արեան փրկութիւնը կը մերժեն»: Երբ տուն եկանք, մինչեւ ժամը մէկ իր սենեակը կ'ազօթէր. լսեցի որ նորէն կ'ուլար հոգիներուն համար:

Երբ առաւօտուն ելաւ մահիճէն ըսաւ. «Կուրծքիս վրայ ծանր բան մը կայ որ զիս շատ կը ճնշէ»: Մինչեւ իրիկուն աւելի եւս ծանրացաւ, այնպէս որ երկու բժիշկ բերինք, առաջինը քննելով ըսաւ թէ՝ «Խնդիրով մը ստամոքսը յուզուած է և ինքը Հափազանց յոգնած է»: Ահա այս եղաւ իր հիւանդութեան սկիզբը: Տէր Յիսուսի խաչին Հարչարանքները այնքան մօտէն տեսաւ որ Անոր ցաւն ալ իր մարմնին մէջ կրեց: Կ'ըսէր թէ կրակ մը զիս կ'այրէ, քան զի հայ ազգիս պատուական հոգիները խաղալէն խնդալէն դէպի դժոխք կ'երթան: Պրէսնիթֆօրտի մէջ քիչ մնաց պիտի մեռնէր սոսկալի խիթերուն պատճառաւ. նոյնիսկ թմրեցուցիչ տրուեցաւ իրեն: Հինգ օր յետոյ քիչ մը լաւացաւ: Իրեն հոգ տանող բժիշկը կ'ըսէր. «Աստուած ինծի հրեշտակ մը խրկեց»:

Երեք շաբաթ վերջը վերադարձանք Տիթրօյթ (Մ. Ն.): Հիւանդութեան ծանր օրերուն իրեն ըսի «Պատուելի, գիտէի որ դուն չես զիմանար, երանի թէ Գանատա եկած չ'ըլլայիր»: Ըսաւ. «Ո՛չ Աննակիւլ, անանկ մի խորհիր. Աստուած չի սխալիր, թող ես մեռնիմ, մէկ հոգի աւելի լսէ Փրկչին սէրը. չէ՞ որ զրուած է. «Ամեն բան բարիի գործակից կ'ընէ անոնց որ զիսքը կը սիրեն. ես զիսքը սիրելու եկայ, իմ քայլերս ինք կ'ուղղէ, զղջացած չեմ, եթէ մեռնիմ, փոս մը նետեցէք և ըսէք թէ Պատ. Եղոյեան անմահացաւ, իմ գլխուս մազերը համրուած են. Աստուած ամեն բան զիտէ ու կը տեսնէ»:

Տասնըհինգ օր մեր քովը մնաց՝ ի Տիթրօյթ. ստամոքսը դեռ տկար ըլլալով՝ ախորժակ ալ չ'ունէր: Միշտ կը վախնայի թէ, քանի որ սնունդ չէր կրնար առնել, ո և է վայրկեան մահը կրնար յարձակիլ իր վրան: Վերջապէս անխուսափելի պատահեցաւ. հիւանդութիւնը նորէն ծանրացաւ, այնպէս որ ստիպեալ հիւանդանոց տարինք զայն: Մասնաւոր հիւանդապահուհի, զատ սենեակ և ամեն խնամք օգուտ չըրին, երկու օր միայն հիւանդանոց մնալով աչքերը դէպի վեր յառած, շարունակ, Տէր Յիսուս, օրհնեալ Յիսուս, փառաւորեալ Յիսուս, աղաղակելով ննջեց Երեքշաբթի 16 Նոյ. երեկոյ ժամը 9.30ին:

Հիւանդութեան ատենները ի Գանատա, հակառակ բժիշկներու արգելքին, և իմ աղաչանքներուս, կարելի չեղաւ խօսելու և զրելու մէջ զինք ետ կեցնել: Իր մէջ, Սբ. Հոգիէն եկած հոգիներուն սէրը անշէջ էր, խօսեցաւ մինչեւ վերջին շունչը: Ինծի ըսաւ որ եկողները չ'արգիլեմ զինք տեսնելէն: Սէր կը բղխէր սրտէն, բոլորին ձեռքը բռնած իմաստութեամբ կը մօտենար սրտերուն, ամենն ալ սիրով Քրիստոսի կը հրաւիրէր: Շատ տկար մէկ օրն էր Գանատայի մէջ. հիւրասենեակը ժողովուրդով լեցուն էր. ըսաւ որ ինքն ալ ներս գալ կ'ուզէ. ըսի «Ո՛չ պատուելի, չեմ թողուր»: Ստիպեց զիս, ձեռքերէն բռնելով ներս տարի, սկսաւ սեւեռուն աչքերով նայիլ և բոլորն ալ ճանչնալ: Երիտասարդ հարս մը բռնելով հարցուց անոր. «Կը սիրե՞ս Յիսուսը, մեղքերովդ զացած ես իրեն»: Եւ ելաւ ու տկար վիճակի մէջ կայնելով իր շալը (Իբր մեղքի օրինակ) ձգեց ուսերուն վրայ և այս կերպով բացատրեց թէ ինչպէս Տէր Յիսուս իր մարմնով խաչափայտին վրայ մեղքը վերցնելով, զամեց զայն և փրկեց մեղաւորը: Երբ կը խօսէր, բոլոր ոյժը կը հաւաքէր, մարդիկ կը զարմանային իր ձայնին վրայ: Գանատայի մէջ նորէն շատ հիւանդ մէկ օրը անապաշխար մէկը եկաւ և հարցուց «Ինչպէ՞ս ես պատուելի»: Ձեռքերը բռնելով՝ պատասխանեց. «Ես աղէկ կ'ըլլամ եթէ դուն երկու բան զիտնաս, մէկը որ կորսուած մեղաւոր մըն ես, երկրորդ որ Փրկիչը քեզ կը փրկէ...»



ԶԱՆԱԶԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ



«Արդարին պտուղը կենաց ծառ է, եւ

հոգիներ վստակողը իմաստուն է»:

ՍՈՂՈՄՈՆ

ԱՄԵՐԻԿԱՅԷՆ.—

Վեր. Եղոյեան իր պանդխտութեան օրերուն եօթնամասուն տարիները լմնացած՝ 16 Նոյեմբեր 1937ին Տիթրօյթ քաղաքին մէջ ննջեց ի Տէր, և մտաւ իր Տէրոջը յաւիտենական հանգիստը: Անոր մեկնումը իր կենակցին՝ քոյր Էլմաս Եղոյեանին, իր զաւակներուն և բոլոր զինք սիրողներուն համար մեծ ցաւ է, նոյնպէս զինքը մօտէն ճանչցողներուն և իր միջոցաւ Քրիստոսի փրկարար շնորհքը ընդունողներուն: Այս մեկնումը իրեն հետ Աւետարանի գործին մէջ գործակից եղողներուս, և մանաւանդ մեր հայ ազգին մէջ

եղած Աւետարանի դաշտին համար ալ մեծ կո-
րուստ մ' եղած է:

Այս առիթով մեծ առանձնաշնորհում մը կը
սեպեմ ինծի համար, Տէրոջմով իմ մեծ եղբօրս,
Աւետարանի գործին մէջ գործակցիս, և նոյն
ատեն իր երկայն տարիներու հասուն փորձա-
ռութիւններովը խրատիչս եղող Վեր. Եղոյեանի
մասին մի քանի տող գրել:

Վեր. Եղոյեանը կը ճանչնայի երկրէն, բայց
շատ քիչ: 1923 ին ընտանեօք Ամերիկա մտաւ,
Նիւ Օրլէնս քաղաքը: Երբ անկէ Գալիֆօրնիա
եկած էր այցելութեան համար, հաւատացեալ-
ներս մեծ ուրախութեամբ զինք զիմաւորեցինք,
և մեծ փափաքով իրեն առաջարկեցինք որ ըն-
տանեօք Գալիֆօրնիա գայ և գործէ Գալիֆօրնիոյ
հայութեան մէջ: Այս առաջարկին ինքը հաւա-
նութիւն ցոյց տուաւ և մի քանի ամիս վերջը
ընտանեօք եկաւ հաստատուելու Բէնէտինա քա-
ղաքին մէջ, ուրկէ նա կ'աւետարանէր նաև Լօս-
Անճէլէս, Ֆրէզնօ և Ֆրէզնոյի շրջակայքը շատ
մը պզտիկ քաղաքներ, ուր հայեր ցրուած, տա-
րածուած են: Ամերիկայի արեւելեան նահանգ-
ներուն մէջ, Նիւ-Եորք, Պոսթօն, Ֆիլատէլֆիա,
Տիթթօրիթ և Շիքաօ, հայութեան մեծ կեդրոն-
ները մի քանի տարին անգամ մը շրջան կ'ընէր
Աւետարանով, և երբեմն ալ Քանատա կ'անցնէր
հոգեւոր պաշտօնեաներէն բոլորովին զուրկ մնա-
ցած հայերուն մէջ գործելու: Անոր քրիստոնէա-
կան նկարագիրը, խոնարհ հոգին ու Քրիստոսի
և Անոր Աւետարանին համար ունեցած սէրը որոշ
իրականութիւններ էին և իմ անձնական կեան-
քիս վրայ մեծ ազդեցութիւն ձգած: Ան ինծի
համար միշտ «Քրիստոսի անուշ հոտը» եղած է
ինչպէս շատերու ալ:

Վեր. Եղոյեան Սուրբ Հոգւոյն կողմանէ ընտ-
րուած հովիւ մըն էր, տանջուածներուն ցաւակից
ըլլալու, անմխիթարներուն մխիթարութիւն
տալու, ինկածները վերցնելու, կոտրած սիրտերը
բուժելու: Իր անձին վրայով ալ լսած և տեսած
սխալ դատումները սիրով և համբերութեամբ
կրելու համար Աստուած անոր հովիւի սիրտ մը
տուած էր: «Ձեր ամէն բաները սիրով ըլլան»
խօսքերը միշտ իր նշանաբանն էր: Ան գիտէր
«Խնդացողներուն հետ խնդալը և լացողներուն
հետ լալը»: Նա իր ժողովուրդը կ'առաջնորդէր
խոնարհութեան, սրբութեան, Սուրբ Հոգիի լի-
ցունութեան և եղբայրսիրութեան կեանքին մէջ:

Վեր. Եղոյեան Աւետարանիչ մըն էր. ան գի-
տէր թէ ի՞նչ է Աւետարանը: Քրիստոսի մեր
մեղքերուն համար մեռնիլը և երրորդ օրը զե-

րեզմանէն յարութիւն առնելը իրեն համար
ամենասուրբ, անհրաժեշտ և անզուգական պատ-
գաւն էր, սա հասկացողութեամբ թէ՛ կորսուած
մարդոց որդիներուն փրկութեան համար այս
Աւետարանէն զատ ուրիշ Աւետարան մը չկրնար
ըլլալ: Այս պատճառաւ շեշտ կը դնէր Աստուծոյ
փրկարար շնորհքին վրայ, որ Քրիստոսով յայտ-
նուեցաւ: Քրիստոսի խաչը և Անոր քաւչարար
Սուրբ արիւնը քարոզել իր ամենամեծ երջան-
կութիւնն էր: Շատ անգամ իր խիստ տկար մար-
մինով բեմին վրայ քարոզած ատեն, այս օրհնեալ
Աւետարանին ետեւը կեցող Սուրբ Հոգին զինք
այնպէս զօրութիւնով կը լեցնէր, որ կարծես
քսան տարեկան երիտասարդի մը զիրքը կ'առ-
նէր:

Վեր. Եղոյեան վարդապետ մըն էր, և Աստու-
ծոյ խօսքին «Ողջամիտ վարդապետութիւնը»
ունէր: Ան իր Աստուածաբանական ուսմունքը
առնելէն, և մինչև անգամ հինգ տարի ալ նոյն
դպրոցէն առած արդիական ուսմունքով իրը հո-
վիւ մը պաշտօնավարելէն յետոյ, Աստուծոյ
շնորհք և խոնարհութիւն ընդունած էր քննելու
Աստուածաշունչը: Ես իր բերնէն լսեցի, որ ըսաւ,
«Երբ ուշադրութեամբ Սուրբ Գիրքը քննեցի,
տեսայ որ ան բառ առ բառ Աստուծոյ խօսքն է,
և երբ այսպէս գիտցայ և ընդունեցի, մտքիս
մէջ եղած արդիականութիւնս շուրջ ինկաւ: Ան,
Սուրբ Գիրքին տուած լոյսին տակ բոլորովին
համոզուած էր որ, «Ողջամիտ վարդապետութիւն»
ունենալը միայն Սուրբ Գիրքին տառական ներ-
շնչումին հաւատալով կարելի կրնայ ըլլալ: Իր
Սուրբ Գիրքին վրայ ունեցած սէրը և յարգանքը
խիստ մեծ էր:

Հաւատացեալները ամէն կողմէն տեսակ տե-
սակ հարցումներով իրենց նամակները լեցուցած
կը զրկէին այս Աստուծոյ ծառային, որոնց շատ
անգամ ընդարձակ բացատրութիւններով և Աս-
տուծոյ խօսքին լուսովը կը պատասխանէր.
նոյնպէս «Մարանաթա»-յի մէջ միևնոյն ծառա-
յութիւնը ըրածը շատերուն յայտնի է: Երբ
Սուրբ Գիրքը ձեռքը կ'առնէր, զիտէր թէ այն իր
գիրքն է. իր առջև որեւէ մոլորեցուցիչ վարդա-
պետութիւն սորվեցնող մը չէր կրնար կենալ:

Վեր. Եղոյեան հոգիներ վաստկող իմաստուն
մէկն էր: Երբ վեց տարի առաջ պատեհութիւնը
ունեցայ Սիւրիա, Պաղեստին, Եգիպտոս, Յու-
նաստան և Ֆրանսա այցելելու, երեսունը հինգի
մօտ քաղաքներու և գիւղերու մէջ գտնուեցայ,
ուր ինչպէս նաև Ամերիկայի մէջ հաւատացեալ-
ներու հանգիպեցայ, որոնց բերնէն վկայութիւն

կը լսէի թէ՛ անոնք Վեր. Եղոյեանի միջոցաւ Տէրը գտած են: Ասոնցմէ՛ ոմանք իրմէ առաջ զացին Տէրոջը հետ ըլլալու, և հիմա միացած են փառաց երկրին մէջ: Ի՛նչ օրհնեալ յիշատակ մըն է, որ այս Տէրոջը ծառան թողուց իր ետեւը և գնաց իր յաւիտենական հանգիստը:

Իրեն համար ժամանակը խիստ թանկագին էր. ամէն տեղ, շատ անգամ ճամբորդութեան մէջ պատեհութիւն կը փնտռէր մարդոց մօտենալու և խօսելու իրենց փրկութեանը վրայով: Անգամ մը երբ Գալիֆօրնիայէն կը ճամբորդէր դէպի արեւելք, Բիթսպրիկ քաղաքը հասած, կը հասկնայ որ թրէնը երկու ժամ վերջը ճամբայ պիտի ելլէ. կը խորհի թէ այս երկու ժամը կաշարանը անցնելու տեղ աւելի աղէկ է քաղաք մտնել և մի քանի հայեր գտնելով Տէրոջը սիրոյն վրայ խօսիլ: Բայց քաղաքին երեք ծանօթ չէր

Փրկչին կամքը, հոգիներուն սէրը, առաջին տեղը գրաւած էր իր սրտին մէջ: Անոր նպատակը Տէրը փառաւորել էր միայն, և կը հաւատամ որ Տէրը փառաւորութեամբ իր կեանքովը և հիմա ալ կը փառաւորուի իր մահովը»:

Տիթրօթիթէն Աննակիւլ Գազանճեան քոյրը, որ ծառայութիւն ըրաւ Պատուելիին մինչև վերջին շունչը և շատ ուրախութեամբ, ինծի կը գրէ. — «Եղբայր, այս անգամ գերազանց հոգի մը տեսայ Պատուելիին վրայ, մինչև հիւանդանոց երթալու կը խօսէր ամենուն և Տէրն ալ մարդիկ կը զրկէր իրեն, որ լսեն:

Վեր. Եղոյեան Տէր Յիսուսի երկրորդ զաւստեան ճշմարտութիւնը բոլոր սրտով ընդունած և Քրիստոսի եկեղեցիին այս «Երջանիկ յոյսը» մեծ ուրախութեամբ քարոզող մէկն էր, և մեծ փափաք ունէր ողջ մնալ, յափշտակուելու ամպերով և Տէրոջը առջեւ ելլել օդին մէջ: Բայց իր Տէրը այսպէս յարմար սեպեց որ այն բոլորին իր բաժինը «Քրիստոսով մեռածները, առաջ յաբուութիւն պիտի առնեն» խոստման մէջ ըլլայ: «Պատուական է Տէրոջը առջեւ իր սուրբերուն մահը». (Սաղմ. 116. 15): «Երանելի են այն մեռելները, որոնք Տէրոջմով կը ննջեն: Այո, կ'ըսէ հոգին, որ իրենց աշխատութեան հանգչին ու իրենց գործերը իրենց ետեւէն կ'երթան» (Յայտ. 14. 13): «Եւ արդարութեամբ պիտի տեսնեմ քու երեսդ. երբ արթննամ, քու դէմքէդ պիտի կշտանամ» (Սաղմ. 17. 15). օրհնեալ ըլլայ Տէրոջը ծառային յիշատակը:



Պատուելին եւ Տիկին Էլմաստ Եղոյեան իրենց փոքրագոյն երկու զաւակներուն հետ

ոչ ալ հայերու. խորհեցաւ թէլէֆօնի գիրքէն հայերու անուններ գտնել և անոնց երթալ: Վերջապէս յաջողելով այս միջոցաւ, կը մտնէ հայու մը խանութը: Խօսակցութեան ատեն այն հոգիին արժէքը և Քրիստոսի փրկութեան ունեցած պէտքը իր սրտին վրայ այնչափ կը ծանրանայ, որ թրէնը կը մոռնայ և կը սպասէ երկրորդ թրէնին, որուն մէջ Տէրը իրեն այնպիսի պատեհութիւններ կու տայ, որ ինքը բոլորովին կը համոզուի թէ այս ալ Տէրոջմէն եղաւ:

Քոյր է. Եղոյեան ինծի կը գրէ. «Հոգիներու սէրը լեցուցած էր իր սիրտը, այս պատճառաւ յանձն առաւ այս վերջին Աւետարանչական պտոյտը: Երբ Պօղոսի ըսին թէ Երուսաղէմ մի երթար, կապեր ու նեղութիւններ կը սպասեն քեզի, անիկա մտիկ չ'ըրաւ: Պատուելիին ալ շատեր ըսին, մի երթար Արեւելք. սակայն իր

Տէրոջը ծառայութեան մէջ
Ֆիլատէլիա
Ձեր եղբայրը
Պ. Ս. ԱԿԻԻԼԵԱՆ

ԱՐՁԱԳԱՆԴ ԳԵՐՄԱՆԻԱՅԷՆ

Վեր. Ա. Զ. Եղոյեանի բաժանումը այս աշխարհէն, մեզի՛ զինքը ճանչցողներուս վրայ մեծ ազդեցութիւն մը ըրաւ, քանզի մենք շատ կը սիրէինք և կը գնահատէինք զինքը իր բարձր արժանիքներուն պատճառաւ: Հայ Աւետ. եկեղեցին կը կորսնցնէ իրմով գերազոյն և անգնահատելի Աստուծոյ վկաներէն մին, որու յիշատակին պիտի անդրադառնանք յաւէտ երախտագիտութեամբ և յարգանքով, որքան որ ապրինք: Ես անձամբ հայոց մէջ ունեցած եմ շատ մը հաւատարիմ բարեկամներ, որոնց հետ սերտօրէն կապուած եմ: Ասոնցմէ մին էր Վեր. Եղոյեան:

Ո՛չ թէ միայն Եփրատ Գոլէհի մէջ առած

նախնական դաստիարակութիւնը և ո՛չ ալ Մարաշի Աստուածաբանական ուսումն էին Եղոյեանը այդպիսի գորեղ և փորձառու Աւետարանի հոգեւոր պաշտօնեայ մը ընողը, հապա մասնաւորապէս իր անձնական ներքին ապրումներն էին, որոնք զինքը այդ գերազանց Աստուծոյ վկան կերտեցին: Արդէն 1895 թ ջարդին իր Բալու գտնուած պահուն, որպէս հովիւ Հայ Աւետ. եկեղեցւոյ, Աստուածային օգնութիւն և մագապուր կեանքի ազատում վայելեց հրաշալի կերպով մը, որմէ յետոյ իր Աստուածը և իր Փրկիչը իրեն համար ամենակարեւոր իրականութիւններ եղան, Որոնց վրայ յենուի, Անոնցմով միայն սկսաւ հաշուել: Յիսուս և Անոր խօսքը իրեն համար իր կեանքը եղած էին, որոնց շուրջ իր բոլոր կեանքը կը դառնար, և որոնց համար նա այդ կեանքը միշտ ի սպաս կը դնէր:

1899-1903 թ տարիներուն Խարբերդի Հայ Աւետ. եկեղեցիները, ինչպէս նաև Ամերիկեան և Գերման միսիոնարութիւնները կ'անցնէին լոկն բայց ուժեղ հոգեւոր արթնութեան շրջանէ մը, որու ընթացքին շատ մը հայ հաւատացեալներ, ինչպէս նաև քարոզիչներ և միսիոնարներ օրհնուեցան. վերոյիշեալ միսիոնարներն և մօտակայ հայ քարոզիչները յաճախ կը հաւաքուէին աղօթքի և ամփոփման պահերու: Գիւղերու և Մէզրէի մէջ տեղի ունեցան երբեմնակի երկարատեւ աւետարանչական ժողովներ ու նաև համաժողովներ, որոնց մէջ հոգեւոր կարեւոր նիւթերու վրայ ուսումնասիրութիւններ եղան, որոնցմով ներկաները ներքնապէս և հաւատքով զօրացան: Այս ատեններուն մէջ Եղոյեանի ներքին կեանքի բարգաւաճումն ու ուժեղացումը մեծ քայլերով յայտնի եղան: Անկէ յետոյ աւելի և աւելի սրտ տեղ բռնեց Ս. Գրքը իր կեանքին մէջ և եղաւ աղբիւրը իր հոգեւոր գիտութեանց, իր պաշտօնին ու իր գործելակերպն ալ հետզհետէ քահանայապետական ու հոգեխնամ նկարագիրն ընդունեց, այնպէս որ իր գործին մէջ ո՛չ թէ մարդոց կամ հոգաբարձուներու պատասխանատու կ'զգար ինքզինքը, հապա բուն իսկ Աստուծոյ, Որմէ այս ծառայութեան կանչուած կ'զգար: Այդ պատճառաւ նա Աստուածային ղեկավարութեամբ և առաջնորդութեամբ իր պաշտօնը վստահ և զօրութեամբ կը կատարէր, և այս ոչ թէ որպէս միջակորեար քարոզիչ մը ընդունելով սովորութեանց ու կարգասացութիւններու, հապա որպէս հոգեւոր ինքնատիպ անձնաւորութիւն մը, հազուադիւր ինքնայատկութեամբ: Այս մարդուն էութիւնն ու նկարագրի ուղղու-

թիւնը բնականաբար ազդուեցաւ, զինքը շրջապատող անձերէն, սակայն այդ նկարագրին և անձնաւորութեան իսկական կերտիչը եղաւ նոյն Ինքն Յիսուս, Որու հետ նա աղօթքով և Ս. Գրքի լայն ուսումնասիրութեամբ և Ս. Հոգիին պարգեւով յարատեւ կապուած էր:

Երբ մեր միսիոնարութիւնը քարոզիչներ դաստիարակելու հարցը սկսաւ ուսումնասիրել, անմիջապէս մեր միտքը լեցուց այն գաղափարը թէ Վեր. Եղոյեան ամենայարմար անձն էր այդ դպրոցին ղեկավարութեան գործին, այնպէս որ մեր խնդիրքը իրեն ներկայացուցինք և մեծ ուրախութիւնով ուրախացանք, երբ տեսանք որ նա այս առաջարկին մէջ աստուածային առաջնորդութիւն գտած զայն ընդհուպ ընդունեց, այնպէս որ Եղոյեան մեր գործին մէջ մտաւ և 1913 թն բացուեցաւ Թագէտսեան քարոզչական դպրոցը: Ու թէև այս դպրոցը պատերազմի պայթումին պատճառաւ միայն մէկ ու կէս տարի տևեց, սակայն անոր բացումը իրեն հետ նոր հոգեւոր շարժում մը և արթնութեան ալիքներ երևան բերաւ Մեզրէի գերմանական հաստատութեանց և Աւետ. եկեղեցիին մէջ, Մարաշէն, Այնթապէն, Ուրֆայէն այս դպրոցին որպէս ուսանող եկող աշակերտաց միջոցաւ:

Վեր. Եղոյեան, որ արդէն ատկէ առաջ մի քանի տարի Մեզրէի եկեղեցիին մէջ օրհնաբեր գործունէութիւն մը ունեցած էր, այս անգամ կրկին կրնար ժամանակ յատկացնել իր դասերէն դուրս, հոգեւոր գործունէութեան և հոգեւոր գործի, Մեզրէի եկեղեցիին և գերման հաստատութեանց մէջ և շատեր այս գործունէութեան առթիւ իրենց Փրկիչը գտան, քանզի Եղոյեան Աւետարանը մեծ ազդուութեամբ և հոգիով կը քարոզէր: Անիկա մասնաւոր պարզեւ մը ունէր ցուցնելու մարդոց թէ, անոնք հակառակ իրենց իտէալներուն և բարեգործութեանց, Աստուծոյ առջեւ կորսուածներ են և թէ անձնապէս իրենց համար մեղսող Փրկիչը ընդունելով միայն իրենց մեղքերէն կրնան ազատուիլ: Այդ առթիւ նա միշտ կը քաջալերէր մարդիկ ջերմ խօսքերով, Յիսուսը ընդունելու հաւատքով, այնպէս որ շատ հոգիներ, որոնք մինչ այն անորոշ և մթին վիճակի մէջ կը խաբխափէին, ջինջ հաւատքի հասան և իրենց փրկութեան վստահութիւնն ունեցան և երջանիկ մարդիկ եղան: Եղոյեան հաւատարիմ հովիւ մը և հոգեխնամ մըն էր և կատարեալ զրական (positiv) աստուածաբան մը: 1905-1910 տարիներուն Միսիոնարական դաշտին մէջ ժամանակ մը եղաւ, երբ արդիական աստուա-

ծառանութիւնը Եփրատի շուրջը դաշտ վաստակել կը ձգտէր. սակայն կարգ մը ուրիշ պաշտպանողական աստուածաբան քարոզիչներու հետ միասին, ի մասնաւորի Վեր. Եղոյեանն էր որ ուժեղ և անսասան ցցուն զիրք բռնեց հին Ս. զրական հաւատքին, Յիսուս Քրիստոսի Աստուածութեան և Ասոր մահուան միջոցաւ եղած փրկութեան համար, այնպէս որ քիչ յետոյ արդիականութիւնը պարտուած՝ ոտքերը հաւաքեց Խարբերդէն:

Բաց աստի Եղոյեան մարգարէական երեւոյթ մըն էր: Անիկա իր Ս. Գրքով այնքան կը զբաղէր որ անհատական անձերու և ազգերու հարցեր Ս. զրական տեսակէտով կը դատէր: Անիկա ապագայի վրայ նայելով, բնաւ լաւատես մը չէր, ինչպէս անոնք, որ կը խորհին թէ հետզհետէական բարեշրջումով մարդիկ աւելի լաւ պիտի



Վեր. ԵՂՈՅԵԱՆ ի Մարտէշ 1935

ըլլան, կեանքի պայմանները պիտի փոխուին և մարդիկ պիտի երջանկանան և Աստուծոյ թագաւորութիւնը այս կերպով պիտի իրականանայ: Այսպիսի անբնական գաղափարներու դէմ կ'ենար Եղոյեան միշտ իր Ս. զրական խորհրդով և կը շեշտէր օրինակի համար պատերազմի նախօրեակներուն այնքան որոշ և յստակ թէ մարդկութիւնը աստուածային դատաստանական ժամանակաշրջան մը կը դիմաւորէ: Ու երբ եղածներուն վրայ կը խորհինք, կ'ըսենք հիմա թէ Վեր. Եղոյեանի գաղափարները այն ատեն ճիշդ են եղեր: Ճշմարիտ հաւատացեալներու համար ալ Անիկա մխիթարութեան ու քաջալերութեան խօսքեր ունէր այն անարկու ժամանակներուն մէջ: Անմոռանալի է տեղահանութեան տարին 1915ի Յունիսի վերջին կիրակին, երբ նա բոլոր

ուրիշ Պատուելիներու խօսելէն յետոյ Մաղ. Գ. 15-17 համարներով բոլոր ներկաները մխիթարեց և զօրացուց: Վեր. Եղոյեան իր շուրջիներուն համար ճշմարիտ բարեկամ մը և Քրիստոսով եղբայր մըն էր, որ անոնց համար հաւատարմաբար կը կենար աղօթքով: Մենք Գերմանացիներս ալ, երբ 1919ի Մարտին թրքական կառավարութեան հրամանով մեր միսիոնարական դաշտը ձգելու ստիպուած էինք, բնաւ չպիտի մոռնանք որբանոցի բակին մէջ հարիւրաւոր հայերով շրջապատուած վերջին հրաժեշտի ժամը: Այն ատեն Վեր. Եղոյեան քանի մը հրաժեշտի խօսքերով շնորհակալութիւն յայտնեց և ձեռնամաձ՝ աղօթքով զմեզ Աստուծոյ պաշտպանող թեւերուն յանձնեց:

Վերջապէս ի՞նչ ուրախութիւն էր կրկին տեսնել զինքը 1935ին, երբ նա 16 տարուան բաժանումէ մը յետոյ այցելեց զմեզ այս անգամ Պուլկարիոյ մեր Միսիոնարութեան դաշտին մէջ: Աստուծոյ խօսքը այնքան ջերմ ուրախութեամբ մը կ'աւետարանէր:

Սակայն հիմա անիկա բաժնուած է մեզմէ և կը գտնուի փառքին և մէջն ամպերու մեզ շրջապատող այն մեծ վկաներու բազմութեան, որոնց կը վերաբերի Դանիէլի ԺԲ 3 «և իմաստունները երկինքի հաստատութեանը լոյսին պէս, և անոնք որ շատերը արդարութեան կ'առաջնորդեն՝ աստղերու պէս պիտի փայլին յաւիտեանս յաւիտենից»:

Իր երջանիկ բաժանումը մեզմէ իւրաքանչիւրին համար զօրեղ մղում մը թող ըլլայ նախելու «Յիսուսի, մեր հաւատքի առաջնորդին ու զայն կատարողին» Եբր. ԺԲ 2:

(Վեր.) Ե. ԷՋՄԱՆ

Missions Inspektor

Tübingen (Allemagne)

ԶԱՅՆ ՄԸ ՍՈՒՐԻԱՅԷՆ

Վեր. Ա. Զ. Եղոյեան աշխարհը թողելով իր յաւիտենական հանգիստը մտած է: Անպատմելի ուրախութիւն է անշուշտ այս իրեն համար, սակայն մեծ կորուստ իր ծանօթներուն և բազմաթիւ բարեկամներուն համար: Կ'զգանք թէ Տէրը բանակին մէջէն զօրավար մը ինկաւ և անոր տեղը բաց է: Տէրը տայ որ նման յաջորդներ ունենայ ան գործի դաշտին մէջ:

Ի՞նչպէս ծանօթացայ Վեր. Ա. Զ. Եղոյեանի:

1910 թուականին, ուսանող մըն էի Մարաշի Աստուածաբանական դպրոցին մէջ: Ընկերներէս ոմանք անձամբ կը ճանչնային զայն: Իսկ ես, ոչ տեսած, ոչ ալ իր անունը լսած էի: Օր մը նամակ մը եկած էր մեզի, բոլոր ուսանողներուս, որուն մէջ պատուելին կը խրատէր մեզ, որպէսզի հոգեւոր գործի պատրաստուելու ատեն, չմոռնանք ամենակարեւոր բանը, որ է Սուրբ Հոգիին լեցունութիւնը ընդունիլ: Նա կը յորդորէր որ ասիկա փնտոենք ամեն բանէ առաջ: Անոր գրածները իմ ուշադրութիւնս գրաւեցին: Այնպէս զգացի թէ իր կեանքէն կը խօսի և ինք ունի այն բանը զոր մեզի կը յանձնարարէ: Այն ատենէն սկսեալ փափաքեցայ զինք տեսնել և իրմէն օգտուիլ: Հետեւեալ տարին 1911ին գարնան ատեն, խեցինք որ Այնթապ եկած է և կը քարոզէ եկեղեցիներուն մէջ և Տէրը հոգեւոր արթնութիւն մը սկսած է իր այս ծառային միջոցաւ: Այնթապէն մեզի հասնող լուրերը կը տեղեկացնէին թէ ինչպէս եռանդով և մեծ քաջութեամբ կը քարոզէր մեծ բազմութիւններու և ինչպէս շատեր, ամեն դասակարգէ մարդիկ կը փրկուէին Անոր շնորհքով:

Քիչ յետոյ Այնթապէն Մարաշ եկաւ: Մենք ալ առիթէն օգտուիլ ուզելով, փութացինք զինք տեսնելու: Նա քարոզեց բոլոր Բողոքական եկեղեցիներու բեմերէն և մենք Աստուծոյ զաւակներս, միշտ զացինք զինք մտիկ ընելու: Քրիստոսի երկրորդ գալուստն էր իր մեծ նիւթը, և կը խօսէր մեծ հեղինակութեամբ: Մեր վրայ թողուցած ազդեցութիւնը շատ խորունկ էր, որ ամպիրոնի վրայ կեցած ատեն, կը կարծէինք երկնառաք մարգարէ մը մտիկ ընել: Աստուծոյ խօսքը կը բարձրացնէր և կ'ուզէր որ զիտութիւն, փիլիսոփայութիւն և մարդկային իմաստութիւն լռեն անոր առջեւ, և բոլոր մարդիկ խոնարհին, քանզի Աստուած ինք կը խօսի Սուրբ Դիրքի էջերուն մէջէն:

Առաջին հանդիպումով իսկ տեսանք որ վեր. Ա. Զ. Եղոյեան շատ գիւրամատչելի մէկն է: Ուստի Աստուծոյ ուրիշ զաւակներով սկսանք երթալ անոր քով: Սիրով կ'ընդունէր մեզ, և ժամեր կու տար մեզի հետ տեսակցելու և խօսակցելու համար: Այն ատենէն սկսեալ թըղթակցեր եմ իրեն հետ: Վերջին նամակը որ իրմէն առի, 8 Սեպտ. 1937 թուականը կը կրէր: Ինծի համար մեծ բարեբաղդութիւն կը սեպեմ այսպիսի մէկը զիտնալ և անոր հետ թղթակցիլ:

Վեր. Ա. Զ. Եղոյեանի գովելի յատկութիւնները շատ են: Մի քանի աչքառուները յիշենք:

Ա. — Նա Ս. Դիրքը գիտնալու մէջ զօրաւոր էր: Ոչ թէ միակ հայերէն լեզուաւ կը կարդար զայն, հապա նաեւ երբայերէն և յունարէն լեզուներով կը կարդար և կը ջանար ամեն համարին բուն իմաստը ստուգել և զիտնալ: Իր վերջին նամակին մէջ կը գրէր, որ Trenchի synonyms of the N. T. գիրքը փնտոեմ և զրկեմ իրեն, վասնզի սերտողութիւններուս մէջ պէտք կ'զգամ անոր՝ կ'ըսէր: Այսքան տարիներ կարդացեր էր Ս. Դիրքը և տակաւին կ'ուզէր սորվիլ, քննել և հասկնալ:

Բ. — Ճշմարիտ քրիստոնեաներ ընել կ'ուզէր բոլոր իրեն հանդիպածները: 1911ին երբ Աստուածաբանական վարժարանը աւարտելով գործի պիտի սկսէի անարժանաբար, հարցուցի իրեն. «Պատուելի, ի՞նչ կ'ըսէք ինծի, Լուսաւորչական մնալու եմ, թէ ոչ Բողոքական՝ ըլլալու եմ, հոգեւոր գործի մէջ օգտակար ըլլալու համար»: Ըսաւ ինծի. «Ոչ Լուսաւորչական եղիր, ոչ ալ Բողոքական, հապա քրիստոնեայ եղիր և եղած տեղը վկայէ Քրիստոսի վրայով: Տէրը իր այս ծառային միջոցաւ խօսեցաւ ինծի և շիտակ ճամբու մը մէջ գրաւ զիս:

Գ. — Վեր. Ա. Զ. Եղոյեան ուրիշներէն սորվելու համար բաց սիրտ մը ունէր: Աշխարհի ո՞ր կողմը որ կայ նշանաւոր գործաւոր մը, կը թըղթակցէր անոր հետ: Տարիներով թղթակցեր է Ֆիլիպ Մաւրօյի հետ: Յարաբերած է Տօքթ. Թօրի, Կէպլըլայնի, Սքաֆիլտի, Ճէյմս Կրէյի և Այրենաայտի հետ: Միւս կողմէն չէր մոռնար տկարները, խեղճերը, աղքատները և ինկածները: Հոս կայ որբեայրի լուացարար քոյր մը՝ կը հարցնէ անոր վրայով: Հոն կայ սպասուհի քոյր մը, կը գրէ անոր և հայրական գութով նամակներ կը գրէ, կը խրատէ, կ'օգնէ, կը քաջալերէ և կ'ուրախացնէ: Իր սիրտը բաց էր ամենուն և ամեն ոք իրեն կը դիմէր:

Դ. — Անմահ հոգիները սիրել և անոնց համար աղօթել: Ասիկա էր իր մեծ գործը: Պատ. Եղոյեան որ եւ է գործաւորէ աւելի հոգիներ շահած է, քան զի նա շատ կը սիրէր զանոնք և շատ կ'աղօթէր անոնց համար:

Ե. — Վեր. Ա. Զ. Եղոյեան Սուրբ Կեանք մը ապրեցաւ: Նա չէր հաւատար թէ հին մարդը կ'ելլէ հաւատացեալին մէջէն: Մեզի գրած մէկ նամակին մէջ այս բառերը կային. «Ես չեմ հաւատար թէ հին մարդը կ'ելլէ, որ եւ է իմաստով հաւատացեալին մէջէն»: Սակայն Սուրբ Կեանք մը ապրեցաւ: Նա իր յանցանքները խոստովա-

նող և պակասները ճանչցող խոնարհ քրիստոնեայ մըն էր:

Եթէ այսօր գերեզմանէ ելլելով իր վերջին խօսքը խօսելու արտօնութիւնը շնորհուէր իրեն, ես կը հաւատամ թէ իրաւունքով եւ ճշմարտութեամբ պիտի կրնար ըսել:

«Ինծի նմանող եղէք, ինչպէս ես ալ Քրիստոսի»: Ա. Կորն. 11. 1:

Հալէպ

Մ. Յ. ՊՕԶՕԳԼԵԱՆ



ՕՐՆԵԱԼ ՅՈՒՇԵՐ



1921ին էր: Տխուր ու ցաւալի օրեր մեզի համար, քան զի կը գտնուէինք Յունա-Քէմալական ճակտի մօտերը: Անկէ ստիպուած էինք բռնել երկրորդ աքսորի ճամբան, այս անգամ իտալական-Տիգրանակերտի ուղղութեամբ, նուազ տաժանելի, քանի որ ազատութիւն ունէինք զրաստներ վարձելու և տեղ տեղ ուտելիք գնելու: Ճամբու ընթացքին ջուր ալ կար և մասամբ ազատ էինք մահուան սպառնալիքէն, և միայն այր մարդիկ էին աքսորուողները:

Ամսուայ մը տաժանելի ճամբորդութենէ վերջ հասանք Մէզրէ: Հոն հիւանդացայ թիֆուսով և փոխադրուեցայ Ամերիկեան հիւանդանոց ուր շատեր Քրիստոնէական սիրով ընտանեկան խնամք կը վայելէին: Չենք կրնար մոռնալ այն սէրն ու զօնողութիւնը, զոր իտալականները ցոյց տուին մեզի ու չեմ տեսած այնքան անկեղծ և անշահախնդիր սէր զոր Մէզրէի ժողովուրդը ցոյց տուաւ աքսորեալներուն:

Երբ բաւական առողջացած էի, քոյր մը խօսեցաւ ինծի հիւանդանոցի մօտերը, սրահի մը մէջ ըլլալիք հոգ. ժողովի մասին: Սրտիս մէջ փափաք մը արթնցաւ ժողովի երթալու, վեր. Եղոյեանը տեսնելու և լսելու յոյսով: Այդ օրեր հիւանդանոցի մէջ շատ կը խօսուէր իր վրայ: Երեկոյեան գացինք ժողովատեղին, մեծ սենեակ մը, ուր լեցուած էին ամէն դասակարգէ մարդիկ: Սկիզբէն մինչեւ վերջը լարուած ուշադրութեամբ մտիկ ըրի: Ժողովէն վերջ, երբ կը խօսակցէի Հափասա ուրբի մը հետ, հասկցայ թէ խօսողը վեր. Եղոյեանը չէր, այլ Պր. Պաղտասար Ղազարոսեան. յուսախար չեղայ:

Հոն ուրիշ ժողովի մըն ալ ներկայ եղայ, ուր կրկին չը կրցայ վայելել պատուելին. այս անգամ ժողովի առաջնորդողն էր Փրօֆ. Մ. Պուճիգանեան որ վերջը եղաւ իմ հոգ. հայրս առաջնոր-

դելով զիս Քրիստոսի և մղելով Աստուծոյ գործին: Անիկա հիմա իր սիրած Փրկչին քովն է ուր կը վայելէ նաեւ իր սիրելի պատուելին: Օրհնեալ ըլլայ սրբոց՝ յիշատակը: Տէրը իր ողորմելովը բժշկեց զիս, ինչպէս շատ անգամներ ազատած էր սարսափելի վտանգներէ ամէն բաները բարիի գործակից ընելով, քանի որ զիս իր նախասահմանութիւնովը կանչած էր, և չը թողուց որ ես անդարձ ու ամբարիշտ վիճակիս մէջ մեռնէի ու կորսուէի:

Հիւանդանոցէն ելլելով սենեակ մը վարձեցի ժողովարանին մօտերը: Այդ օրեր, վեր. Եղոյեան ժողովներ կ'ընէր Գերման միսիոնարական շէնքին մէջ: Կարգ մը ժողովներու ներկայ եղայ, խոր տպաւորութիւն կրեցի, ներկայ կ'ըլլայի նաեւ դասաժողովներու զոր պատուելին կ'ընէր մօտակայ շէնքի մը մէջ, որուն մի քանի այր մարդիկ միայն ներկայ կ'ըլլային բազմաթիւ կիներու հետ: Այս ժողովները շատ խորունկ ազդեցութիւն կը գործէին վրաս: Սակայն Սատանան արթուն էր: Գտնուած տանս մէջ դրացի էի իտալական Պր. Բարունակին, որ սաստիկ հակառակ էր վեր. Եղոյեանին: Ասիկա միտքս պղտորեց այնպիսի աղտոտ և անվայել չարախօսութիւններով որ սկսայ կասկածիլ Աստուծոյ այդ սուրբ մարդուն վրայ: Այդ օրեր Մէզրէի մէջ կային մի քանիներ որոնք բան գործ ըրած էին Աստուծոյ ծառաները քննադատելով Աստուծոյ գործին փաստել: Իրենք չէին մտնել ու չէին ալ թողուր որ ուրիշներ մտնեն: Մատթ. ԻԳ 13,

Կրկին աքսորուեցայ, այս անգամ Տիգրանակերտի կողմերը և աւելի ցաւալի պայմաններու տակ: Մահուան սարսափելի վտանգներու մէջէն Տէրը զիս կրկին ազատեց. 3 ամիս վերջը միջոցով մը վերադարձայ Մէզրէ: Սրտիս մէջ փափաք մը արթնցած էր Աստուծոյ խօսքը լսելու և կարդալու: Որքան որ կրնայի կ'երթայի ժողովներու որոնք այս անգամ ժողովարանին մէջ տեղի կ'ունենային: Անգամ մը պատուելին կը խօսէր Յիսուսի գալստեան և յափշտակութեան մասին, բնարան ունենալով Բ. Կոր. Ե 7, այնքան յստակ և եռանդով: Այս նիւթը և մեռելոց յարութիւնը ինծի համար բոլորովին նոր բաներ էին, արթնցայ: Սակայն յաջորդող նեղութիւններ և կրած բարոյական ծանր հարուածս. զիս ընկճելով մտորեցուցին, մինչեւ մահուան մօտ բերելով զիս, ուրկէ Տէրը հրաշքով մը ազատելով փրկեց զիս իր Արիւնովը և օծեց իր Հոգիովը ապրելու և գործելու իր փառքին համար:

Դարձի գալէս վերջ շատ փափաք ունեցայ տեսնել այդ օրհնեալ մարդը, սակայն յոյս չունէի այս աշխարհի վրայ վայելել զինքը. տարիներ վերջ երբ լսեցի թէ ֆրանսա կուգայ, մեծ ուրախութիւն մ'արթնցաւ սրտիս մէջ: Վիէն գացի զի մաւորելու զինք. երբ զիշերուան ուշ ատեն օթոյով կը բերէի զինք գէպի Վալանս, հարցուց, Ե՞րբ ապաշխարեցիր:

Սկսայ պատմել անցեալը, շատ ուրախացաւ ու փառք կուտար Աստուծոյ իր զարմանալի գործերուն և իր կենդանի ու զօրեղ եղող խօսքին համար:

Պիտի չմոռնամ նաեւ Լիոնի մէջ տեղի ունեցող ձեռնադրութեան ժողովը: Օրհնեալ ժամ մըն էր այդ, երբ Վեր. Եղոյեան իր նահապետական ձեռքերը զլխուս վրայ զնելով օրհնեց զիս: Իրական առանձնաշնորհ՝ մըն էր այս ինչ համար, քան զի թերեւս վերջին ձեռնասուն ըլլալով կը վայելէի զայն:

Տէ՛րը, Եղիայի հոգին Եղիսէներու վրայ թող հանգչեցնէ:

Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ



Վեր. ԵՂՈՅԵԱՆ ֆրանսահայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան Ժողովին մէջ, Ի Լիոն 1935ին:

Իր աջ կողմը կը նստին նորընծայ Վեր. Ժ. Կ. Պարսումեան եւ Տիկին Պարսումեան, իսկ ձախ կողմը Վեր. Տօքթ. Պէռօն, Սէօռ Հէտվիկ Պիւլ (Հալէպ), նորընծայ Վեր. Ա. Օ. Փափազեան եւ Տիկին Փափազեան:

ԻՄ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՄ

Վեր. Եղոյեանի մահուան լուրը դառն վիշտ պատճառեց ինծի, ինչպէս նաեւ ամբողջ հայ հոգեւոր շրջանակին: Քանզի յանձին անոր մենք կորսնցուցինք մէկը, որ մօտաւորաբար 50 տարի մարգարէական հոգով կոխ մղեց խաւարի ու ժերուն դէմ՝ իր ձեռքին մէջ ունենալով «Հոգիին սուրը»: Մէկը, զոր Աստուած իբր գործիք ծառայեցուց՝ արթնցնելու և Փրկչին խաչին ոտքը խոնարհեցնելու բազմաթիւ մեղաւորներ, եւ Տէրոջ խօսքով մխիթարելու, մնացանելու եւ աճեցնելու հազարաւոր հաւատացեալներ: Անհամար են իր հոգեւոր զաւակները եւ ներկայիս հազուադիւս է հայ հաւատացեալ մը, որ անոր հոգեւոր ազդեցութիւնը կրած չըլլայ:

Մին այս վերջիններէն եղած է տողերս գրողը: Միեւնոյն գիւղի, Խուլլու — Թիւլատինի մէջ ծնած ըլլալուս եւ ազգակցական կապ մըն ալ ունենալուս պատճառաւ, մանկութեանս օրերէն ճանչցած եմ հանգուցեալը: Գէթ մէկ տարի աշակերտած եմ իրեն ու լսած էի կուռ դասախօսութիւնները բաղդատական կրօնագիտութեան վրայ, յաճախ ունկնդրած եմ իր քարոզներուն եւ մտերիմ հաղորդակցութեան մէջ գտնուած եմ իրեն հետ, այցելութիւններով եւ թղթակցութեամբ: Եւ այս բոլոր շփումներու միջոցաւ ճանչցած եմ իր քրիստոնէական կեանքն ու նկարագիրը օրէ օր աւելի պայծառ լոյսի մը տակ: Կրած եմ իրմէ տպաւորութիւններ, որոնք

ինձի օրհնութիւն եղած են: Վստահ եմ թէ անոնք «Բանքեր»-ի ընթերցողներուն վրայ ալ նոյն ներգործութիւնը պիտի ընեն:

Ուստի պիտի ջանամ պարզել զանոնք, բայց ո՛չ թէ Վեր. Եղոյեանը, մարդը, փառաւորելու դիտումով, — ասով ոեւէ անձէ աւելի զինքը վերաւորած պիտի ըլլայի, — հապա իր Տէրը, Որուն կը պարտի հանգուցեալը իր բոլոր յաջողութիւնները եւ զՈր բարձրացնել կը ձգտէր իր բոլոր կարողութիւններովը:

Պատուելիին երիտասարդութեան օրերուն մեր գեղացի կին մը ըսած է իրեն, «Բեզ տեսնեմ, Պօղոս Առաքեալ մը ըլլաս»: Իր վերջին այցելութեան ատեն հանգուցեալը Եւրոպայի մէջ տեղ մը յիշած է այդ մաղթանքը և ապա աւելցուցած՝ թէ ինքը թէեւ չէ յաջողած Պօղոս Առաքեալ մը ըլլալ, բայց շատ ջանացած է նմանիլ անոր, եռանդով ուսումնասիրած է անոր գրութիւններն ու գործունէութիւնը եւ անոնցմէ բազմապիսի օրհնութիւններ քաղած:

Եւ նա շատ տեսակէտներով թէեւ ոչ հաւասար, բայց նման էր իրեն մտատիպար առաքեալին:

1. — Ս. Գրոց Կանդեպ իր ունեցած դիրքը. — Կատարելապէս իւրացուցած էր Պօղոսի խօսքը, «Բոլոր Գիրքը Աստուծոյ շունչն է»: Կը հաւատար Ս. Գրքի բառական ներշնչման ու անսխալակաւորութեան: Իրաւ է թէ Եփրատ գօլէճի մէջ իբր քարոզիչ պաշտօնավարած ատեն յայտարարած էր թէ Աստուածաշունչին մէջ 1000 սխալ գտած էր. բայց քիչ ետք սրբապրեց այդ տեսութիւնը և սկսաւ պնդել թէ հոս՝ իբր խօսքը ճշմարիտն Աստուծոյ՝ բառ առ բառ ճշմարտութիւն է, և «օգտակար է սորվեցնելու, յանդիմանելու, շտկելու և արդարութեան խրատելու համար»: Կը գործածէր զայն իբր հզօր մուրճ՝ Աստուծոյ դէմ հպարտացած մտքերը փշրելու, իբր անապականացու սերմ՝ կակուղցած սրտերու մէջ յաւիտեական կեանք արտադրելու, Ս. Հոգւոյն ներգործութեամբ:

Շատ լաւ ծանօթ էր մարգարէութեանց և անոնց մէկմէկու հետ ունեցած առնչութեան: Վստահ էր թէ անոնք բոլորն ալ պիտի կատարուին: Ատկէ մղուած ինքն ալ երբեմն մարգարէի յատուկ յայտնութիւններ կ'ունենար: Գոնէ երկուքը յիշեմ: 1916ին ռուսական բանակին Կարինն ու Երեզան գրաւելէն յետոյ՝ յառաջացած էր մինչեւ Բղի ու Ճապաղշուր, Խարբերդէն թիւրքեր կը փախչէին դէպ ի արեւմտեան նահանգներ: Մէզրէ գտնուող գերմաններն իսկ իրենց

ծրարները կը պատրաստէին անկէ մեկնելու՝ վախնալով թէ ռուսերը քիչ ետք պիտի գրաւէին Խարբերդն ալ: Սակայն Վեր. Եղոյեան կը յայտարարէ, «Մարգարէութիւններուն նայելով ռուսերը Եփրատէն դեռ չպիտի անցնին, մինչեւ Խարբերդ չպիտի յառաջանան»: Եւ թէեւ ռուսերը դեռ աւելի քան մէկ տարի կը մնան իրենց այդ դիրքերուն վրայ Բալուի շատ մօտերը, բայց աւելի չեն յառաջանար, Եփրատը չեն անցնիր: Դարձեալ՝ 1919ի առաջին ամիսներուն, հայերուս յոյսի եւ ոգեւորութեան օրերուն, երբ շատեր կ'երագէին ծովէ ծով Հայաստան, Վեր. Եղոյեան կը թելադրէ Տր. Պարթընի՝ միջոցներ գտնել եւ հայ բեկորները Խարբերդէն հեռացնել, քան զի Ս. Գրքի նայելով հայերուն համար գալիքը լաւ չտեսներ: Ինքը յոռետես մը կը նկատուի այն ատեն, բայց ժամանակը ցուցուց թէ նա ոչ թէ յոռետես մըն էր, հապա իրատես մը: Եւ այս իրատեսութիւնը կը պարտէր Ս. Գրքի անսխալակաւորութեան հաւատալուն, զայն խորապէս ուսումնասիրած եւ անոր մարգարէութեանց ոգւոյն քաջածանօթ ըլլալուն:

Հոս տեղն է յիշել թէ Վեր. Եղոյեան Ս. Գրոց այսպիսի բարձր դիրք մը տալով միասին՝ մեծ յարգանք ու սէր ունէր նաեւ հանդէպ գիտութեան: Նա չէր ան նեղմիտ հաւատացեալներէն, որոնք Աստուածաշունչէն ու հոգեւոր գրականութենէն զատ ուրիշ գրքերու ընթերցումը մեղք կը նկատեն: Իր իսկ յայտարարութեամբ կ'ընդունէր ու կը կարգար մօտաւորաբար 20 տեսակ թերթեր ու պարբերաթերթեր, ոմանք նոյնիսկ անաստուածութիւնը պաշտպանող:

Իր մտքի ընդհանուր զարգացումովն ալ ուրեմն Վեր. Եղոյեան շատ կը նմանէր Պօղոսի, որ իր դարուն ամենէն մեծ ու զարգացած միտքերէն մին էր:

2. — Եղոյեանի ալ Պօլոսի նման լման Աւետարանը կը քարոզէր. — Հաւատացած էր եւ կը քարոզէր նախ՝ թէ մեղքը սարսափելի ուժ մըն է: Իր բնական վիճակին մէջ անոր իշխանութեան տակ կը գտնուի ամեն մարդ անխտիր եւ չկրնար անկէ ազատիլ իր ամենէն ազնիւ ու զօրաւոր ջանքերովն իսկ: Ուստի դէմ էր ո եւ է տեսութեան, որ ատոր հակառակը կը պնդէ:

Նա կը քարոզէր թէ Բրիստոս մարդէ վերածնած է: Իր մահովը մեռցուցած է անոր հին մարդը և իր յարութիւնովը նոր մը ստեղծած. Նա թէեւ մէկ կողմէն կատարեալ Աստուած, միւս կողմէն ալ կատարեալ մարդ է. ուստի իր ըրածը

փոխանորդական նշանակութիւն ունի: Մարդուն միակ ընկերքն է իւրացնել Քրիստոսի գործը հաւատքով, հնազանդութեամբ և անձնատուութեամբ: Ատով նա կ'ըլլայ Աստուծոյ որդեգիրը և ժառանգորդը Յիսուսի արդարութեան, սրբութեան, փրկութեան, յարութեան և յաւիտենական կեանքին ու փառքին:

Վեր. Եղոյեան կը քարոզէր թէ Քրիստոսի այս վսեմ գործին արդիւնքը իր կատարելութեամբը պիտի յայտնուի Անոր երկրորդ գալուստովը, երբ փառաւորեալ գլուխը պիտի փառաւորէ նաեւ իր մարմինը, — իրեն հաւատացող, հնազանդող և իր չարչարանաց մասնակցող քրիստոնեաներու խումբը: Ուստի Վեր. Եղոյեան ակնդէտ կը սպասէր այդ մեծ օրուան գալուն և իր քարոզներուն ու գործունէութեան ամենէն կարեւոր նպատակներէն մին ըրած էր պատրաստել եկեղեցին, «հարսը» դիմաւորելու փեսան:

3.— Վեր. Եղոյեան նման է Պօլոսի նաեւ իր կոչումովը.—

Հոգեւոր մշակ մը իր ասպարէզին մէջ փրնտ ունիւ է, «ոչխարներու բակը» մտցնելու է ճշմարիտ «դռնէն», Քրիստոսի հրաւերով: Այդպէս ըրած էր Պօղոս, որ իրեն համար մեծ համարձակութեամբ կը վկայէ.— «Պօղոս, Առաքեալ... Յիսուս Քրիստոսի ձեռքով և Հօր Աստուծոյ: Աստուած որոշեց զիս իմ մօրս որովայնէն և իր շնորհքովը զիս կանչեց» (Գաղատ. Ա. 1 և 13):

Վեր. Եղոյեան ալ Աստուծոյ ծառայութեան մէջ մտաւ նոյնպիսի խոր համոզումով մը: Իր հայրը, Զաքարիա, — Քրիստոսի և Անոր գործին սիրովը լեցուած պարզ հաւատացեալ մը, — որդին իր մանկութենէն նուիրած էր Աւետարանի պաշտօնին և այդ նպատակին համար զայն դրած էր Եփրատ գօլէճ՝ յանձն առնելով նիւթական ամէն զոհողութիւն, հակառակ իր աղքատիկ պայմաններուն: Որդին ալ ներքին համոզումն ունէր թէ Տէրը ընդունած է իր հօրը այդ նուէրը:

Եփրատ գօլէճի շրջանը աւարտելէ ետքը թէև ատեն մը ուղեց անտեսել աստուածային կոչումը՝ անալով իր բարի, բայց տեսանելիին կառչած մօրը, Զարդարի, որ կը յորդորէր զինք հովուութենէ աւելի փայլուն ու հանդուստէտ ասպարէզ մը ընտրել: Թէև նա նոյնիսկ փորձեց Ամերիկա անցնիլ փախուստի ճամբով, քանի որ այդ տարիներուն հայերուն անցազիր չէր տրուեր թիւրքիայէն արտասահման մեկնելու համար: Սակայն թիւրք ոստիկանութեան կողմէն ձերբակալուելով շղթայակապ խարբերող վերադար-

ձուիլը բաւական եղաւ զինքը համոզելու թէ ինչպէս Յովնան, ինքն ալ չկրնար փախուստ տալ իր աստուածային կոչումէն:

Ուստի զնաց Մարաշ, հետեւեցաւ աստուածաբանական ճիւղին և ապա նետուեցաւ Աւետարանի ծառայութեան մէջ եւ հոն ալ մնաց մինչև խոր ծերութեան, միշտ պատնէշին վրայ խիզախօրէն կուրծք տալով բոլոր յարձակումներուն, քանզի Պօղոսի նման խորապէս համոզուած էր թէ Աստուած դրած էր զինք այդ պաշտօնին վրայ: Աւետարանի քարոզութիւնը իր վրայ դրուած հարկ մը, իրեն յանձնուած տնտեսութիւն մը կը նկատէր. վա՛յ է իրեն, եթէ չքարոզէ զայն (Ա. Կորն. Թ. 16, 17):

Այս հաւատքն ու յոյսը զինքը ազատած էին երկու կարգի գերութենէ, նախ՝ մարդու վախէ: Բա՛լ էր եւ ճշմարտութիւնը կը պաշտպանէր իրեն մասնայատուկ կորովով մը: Մարդուն յանցանքը անխարօրէն ճակտին կը զարնէր թէ հայ ընչին ու պարզուկ գիւղացիին, թէ՛ Ամերիկացի ու Գերմանացի միսիօնարին եւ թէ՛ թիւրք բռնապետ պաշտօնեային:

Բնական մարդուն համար պակաս մտահոգութեան առարկայ չէր նաեւ բազմախոս ընտանիքին ապրուստի ու ապագայի հարցը: Այդ բոլոր հոգեբուն վրայ աւելցուցէք նաեւ այն բոլոր մաշող նեղութիւնները, որոնք իր ուսերուն վրայ կը ծանրանային աշխարհիկ մարդոց չարախօսութեան ու ատելութեան, հաւատացեալներէ շատերու ապերախտութեան, տգիտութեան ու թուլութեան եւ իր հոգեւոր եռանդուն գործունէութեան յաճախ անպտուղ մնալուն պատճառաւ: Աւելցուցէք նաեւ հոգեկան դառնակսկիծ տուայտանքը, որով իր զգայուն սիրտը կը ճմլուէր ի տես իր բազմաթիւ ազգականներուն ու բարեկամներուն եւ ամբողջ ազգին տառապանքին, տարազրութեան ատեն, և պիտի տեսնէք թէ Վեր. Եղոյեան պատճառ ունէր կիսաճամբան մնալու, բոլորովին ընկճուելու:

Այժմ քո՛ւն է ան իր սիրելի ու պաշտելի Փրկչին եւ իր աշխատութենէն կը հանգչի մինչեւ հրեշտակապետին ձայնովը յարութիւն առնէ ու իր փառաւորեալ մարմնովը դիմաւորէ Քրիստոսը եւ այլևս յաւիտեան Անոր հետ ըլլայ: Ու իր գործերը իր ետեւէն կ'երթան: Ա. Թեա. Դ 15, 16, Յայտ. ԺԴ 13:

Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St. - Savaournin Marseille

Le Gérant: H. N. GHAZAROSSIAN

ՕՐ ՄԸ

Գերմաներէնէ՝ 3. Ն. 2.

Առաջագին, P

1. Օր մ'ալ պիտ' իմ լոեն երգեր
Նուրբ թիւն կտրի հասնի գիշեր
Բայց պիտ չանցնի ոչ մէկ վայրկեան
Երբ արքայիս քովն արթննամ:

2. Բայց պիտ չանցնի ոչ մէկ վայրկեան
Երբ արքայիս քովն արթննամ:

3. Յայն ժամ ձայնիս փռեցի ոչ մէկ
Ան լոկիւ շնորհիւ էլ չիտիւր
Ան լոկիւ շնորհիւ էլ չիտիւր
Ան լոկիւ շնորհիւ էլ չիտիւր

4. Մինչ՝ այն օրուան խաղաղ վսեմ,
Ճըրագս վառած, ես կ'սպասեմ,
Մինչ թագաւորս իր դուռն բանայ
Եւ ես ցնծամբ թռչիմ առ Նա: (Կրկ.)

1. Օր մ'ալ պիտ' իմ լոեն երգեր
Նուրբ թիւն կտրի հասնի գիշեր
Բայց պիտ չանցնի ոչ մէկ վայրկեան
Երբ արքայիս քովն արթննամ:
Կրկ. Յայն ժամ ձայնիս փռեցի ոչ մէկ
Ան լոկիւ շնորհիւ էլ չիտիւր
2. Օր մ'ալ մարմինս իյնայ անզէն
Անլուր եմ տեղ ժամանակէն
Բայց թէ ի՞նչ հոգ: Բանգի գիտեմ
Բնակարանս պատրաստ գտնեմ: (Կրկ.)
3. Օր մ'իբրիկուան վերջալոյսին
Թերեւս լսեմ մի ձայն լոին
«Ձգէ զաւակ աշխարհը սին
Եկուր հանգչէ գիրկն Յիսուսի»: (Կրկ.)
4. Մինչ՝ այն օրուան խաղաղ վսեմ,
Ճըրագս վառած, ես կ'սպասեմ,
Մինչ թագաւորս իր դուռն բանայ
Եւ ես ցնծամբ թռչիմ առ Նա: (Կրկ.)

☒ **ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ.**— Խմբագրութիւնս իր սրտագին շնորհակալութիւնը կը յայտնէ ջննդեան եւ նոր տարուան առթիւ մեզի ղրկուած ջերմ մաղթանքներուն համար:

☒ **ԵՂԲ. ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ.**— Դեռ կան քանի մը անձեր, որոնք «Բանբեր»ի պէտք ունին, սակայն օգնող ձեռքերու կը կարօտին. Յունուարի թիւին մէջ տուած ենք անոնց ցանկը: «Բանբեր»ը այս տարի 200 հատ աւելի տպեցինք, այն հաւատքով որ 200 նոր բաժանորդներ պիտի գտնուին: Այս մասին օգնողներուն կանխաւ մեր սրտագին շնորհակալութիւնները կը յայտնենք:

ԽԲՄ.



ՀՈԳ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ՄԱՐՍԵՅԼԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ

ՄԵԾԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ա. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ԵՆ ԱՂՕԹԱԺՈՂՈՎՆԵՐ

Քաղաքը. 2, rue Philippe-de-Girard

Քարոզածոցով. ժամը 10ին

Աղօթածոցով. ժամը 11.30ին

Ս. ԺԻԻԼԻԷՆ. 55, boulevard de la Figone

Աւետարանչական ժողով ժամը 16ին

ՍԷՆ ԼՈՒԻ. 11, Impasse des Muriers

Սուրբ Գրական սերտողութիւն ժամը 10.30ին

Քարոզածոցով ժամը 14.30ին

Ս. ԱՆԹՈՒԱՆ. 85, route Nationale

Աւետարանչական ժողով ժամը 14.30ին

ՍԷՆ ԼՈՒ. 21, boulevard Escalon

Սուրբ Գրական սերտողութիւն ժամը 10.30ին

Քարոզածոցով. ժամը 15.30ին

ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԹ. Villa Seferի մեր սրահին մէջ

Աւետարանչական ժողով ժամը 14ին

Աւետարանչական ժողովներ

ԿԱՐՏԱՆ. Յակոբեան տան մէջ ժամը 14.30ին

ԼԱ ՍԻՕԹԱ. Ֆրանս. Աւետ. եկեղեցւոյ սրահը ժամը 14.30ին

ԷՔՍ. Ֆրանս. Ե. Ք. Ը.ի սրահը ժամը 14ին

բ. ՇԱՔԱԹԱՄԷՋԻ ԱՂՕԹԱԺՈՂՈՎՆԵՐ

Զուրեքշարքի — ՍԷՆ ԺԻԼԻԷՆ ժամը 14.30ին

ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԹ » 14.30ին

Քաղաքը » 20ին

ՍԷՆ ԼՈՒ » 20ին

ՍԷՆ ԼՈՒԻ » 20ին

Հինգշարքի — ՍԷՆ ԺԷՌՈՒՄ » 19ին

Ուրբան — ՍԷՆ ԱՆԹՈՒԱՆ » 14ին

գ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ Ե. Ք. Ը.

Քաղաքը. երկուշարքի ժամը 20ին

ՍԷՆ ԼՈՒ. Հինգշարքի » 20ին

ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ

ա. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐ

Քաղաքը ժամը 8.30ին

Ս. ԼՈՒ » 8.30ին

ԼԷՎ ՕԼԻՎ » 9ին

Ս. ԼՈՒԻ » 9ին

Ս. ՄԱՐԿՐԻԹ » 9ին

Ս. ԱՆԹՈՒԱՆ » 14.30ին

ՍԷՆ ԺԻԼԻԷՆ » 14.30ին

Ս. ԺԷՌՈՒՄ » 14.30ին

ՍԷՆ ՄԻԹՐ » 14.30ին

ԱԼՕ » 14.30ին

բ. ՀԱՅՆԵՐԷՆԻ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐ

Տեղի կունենան վերոյիշեալ տեղերու մէջ՝
շաբաթամէջի կէս օրէ վերջերը ժամը 4.30էն
սկսեալ եւ Հինգշարքի ամբողջ օրը, ի բաց
առեալ կարտան, ՍԷՆ ՄԻԹՐ եւ ՍԷՆ ԺԷՌՈՒՄ:

Պաշտօնեաներ եւ անոնց հասցէները

ՎԷՐ. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

ՕՐ. ԵՍԹԵՐ ՏԷՄԻՐՃԵԱՆ

ԿԻԻԼՇԱՆ ԵՂՔ. ՊԱՏԱՔԵԱՆ

7, rue Papère MARSEILLE (B.-du-Rh.)

(Téléphone Colbert 03-97)

Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆ, 21, boul. Escalon

St-LOUP-MARSEILLE (B.-du-Rh.)

Պատ. ՍԱՄՈՒԷԼ, 11, Impasse des Muriers

St-LOUIS-MARSEILLE (B.-du-Rh.)

